



«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ.
ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԵՐԻ
ՀՍՏԱԿԵՑՈՒՄ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ»

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը մշակվել է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության (ԻՀԱ) «Ազդարարման բազմակողմանի խթանում Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) աջակցությամբ՝ Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող «ԵՄ-ն հանուն բարեփոխության՝ Արևելյան գործընկերության համար» ծրագրի շրջանակներում:

Սույն փաստաթղթում արտահայտված է հեղինակի՝ ԻՀԱ դիրքորոշումը, որի համընկնումը ԲԿԳ և ԵՄ դիրքորոշման հետ պարտադիր չէ:

Հրապարակումից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

© ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԵՐԵՎԱՆ,

Սեպտեմբեր, 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումներ	3
I. Միջազգային ստանդարտներ և առաջավոր փորձ.....	4
1. Միջազգային ստանդարտներ.....	4
Ա) ՏՀԶԿ ստանդարտներ	4
Բ) ԵՄ ստանդարտներ.....	5
2. Միջազգային առաջավոր փորձ.....	6
Ա) Ընդհանուր դիտարկումներ	6
Բ) ԵՄ և ԱԳ երկրների առաջավոր փորձի օրինակներ.....	12
i. Սլովակիա.....	12
ii. Նիդեռլանդներ	15
iii. Ուկրաինա	18
II. ՀՀ օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա	22
1. Ազդարարման հարցերով պատասխանատու մարմիններ, որոնց իրավասություններն ամրագրված են օրենսդրությամբ	22
Ա) ՀՀ գլխավոր դատախազություն.....	22
Բ) ՀՀ արդարադատության նախարարություն	23
Գ) ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով.....	24
Դ) ՀՀ մարդու իրավունքների պաշտպան	25
Ե) Ազդարարման հարցերով պատասխանատուներ.....	28
2. Ազդարարման հարցերով պատասխանատու այլ մարմիններ և կազմակերպություններ.....	28
Ա) ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին.....	28
Բ) «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ/ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա.....	29
III. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	30
IV. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	35

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԳ Արևելյան գործընկերություն

ԵՄ Եվրոպական միություն

ՀԿ Հասարակական կազմակերպություն

ՀՀ Հայաստանի Հանրապետություն

ՄԻՊ Մարդու իրավունքների պաշտպան

ՏՀԶԿ Տնտեսական համագործակցության և զարգացման
կազմակերպություն

ՔՀԿ Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

I. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Ազդարարման հարցերով պատասխանատու մարմիններին առնչվող միջազգային փորձը միատարր չէ: Միջազգային պրակտիկայում առկա են պատասխանատու մարմինների տարբեր մոդելներ, երբ ազդարարման ոլորտում իրավասությունները տրամադրված են մեկ կամ մեկից ավելի մարմինների, որն առավել մանրամասն կներկայացվի ստորև: Մինևույն ժամանակ, անկախ մոդելի ընտրությունից, միջազգային կազմակերպությունների կողմից առաջ են քաշվել ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների նկատմամբ որոշակի պահանջներ, որոնցից հատկապես ուշադրության են արժանի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից և Եվրոպական Միության (այսուհետ՝ ԵՄ) կողմից սահմանված ստանդարտները: Այսպես.

Ա) ՏՀԶԿ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի կողմից Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի գնահատման շրջանակի «Ազդարարման ոլորտի» թիվ 3.1. հենանիշը սահմանում է՝ *«Ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու գործակալություն, ստորաբաժանում կամ մասնագիտացված աշխատակազմ»-ի* առկայության պահանջ¹, որը մոնիթորինգային ուղեցույցի համաձայն մեկնաբանվում է որպես *«գործակալություն, ստորաբաժանում կամ մասնագիտացված աշխատակազմ, որն իրականացնում է բացառապես որոշակի գործառնություն(ներ) և չի կատարում այլ պարտականություններ»*²

Ըստ ՏՀԶԿ վերոնշյալ մոնիթորինգի ազդարարման ոլորտի թիվ 3.2. հենանիշի՝ ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու գործակալության ստորաբաժանման կամ աշխատակազմի հիմնական լիազորությունները ներառում են *«ազդարարների դեմ հաշվեհարդարի (վնասակար գործողությունների) դեպքերի վերաբերյալ բողոքների ստացում և*

¹ OECD (2023), Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Assessment Framework, էջ 35-36, հասանելի է՝ <https://www.oecd.org/investment/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Assessment-Framework-ENG.pdf>

² OECD (2023), Istanbul Anti-Corruption Action Plan, 5th Round of Monitoring: Guide, էջ 48, հասանելի է՝ <https://www.oecd.org/corruption/anti-bribery/corruption/acn/Istanbul-Anti-Corruption-Action-Plan-5th-Round-Monitoring-Guide-ENG.pdf>:

քննություն», որի առնչությամբ մոնիթորինգային ուղեցույցը սահմանում է «*օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու պահանջ*»:

3.2. հենանիշը սահմանում է նաև ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու գործակալության ստորաբաժանման կամ աշխատակազմի հետևյալ հիմնական լիազորությունը՝ «*արտաքին և ներքին ազդարարման եղանակներով ներկայացված ազդարարումներին պատշաճ ընթացք չտալու դեպքերի, ինչպես նաև ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների խախտումների վերաբերյալ բողոքների ստացում և գործողությունների ձեռնարկում*»։ Մոնիթորինգային ուղեցույցը «գործողությունների ձեռնարկում» եզրույթը մեկնաբանում է որպես «*պատասխանատու մարմնի կողմից առնվազն առաջարկություններ կամ հրամաններ տալը համապատասխան մարմիններին՝ վերջ դնելու ազդարարների պաշտպանության օրենսդրության խախտումներին*», որի կապակցությամբ կրկին սահմանվում է «*օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու*» պահանջ:

Վերոնշյալ գնահատման թիվ 3.3. հենանիշը սահմանում է ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու մարմնի լիազորությունը՝ «*կիրառել պատասխանատվության միջոցներ կամ ազդարարների՝ հաշվեհարդարից (վնասակար գործողություններից) պաշտպանության այլ միջոցներ կամ նախաձեռնել դրանց կիրառումը*», որը մոնիթորինգային ուղեցույցի համաձայն մեկնաբանվում է որպես «*մարմնի կողմից պատասխանատվության միջոցի կիրառում կամ դատական գործընթացի նախաձեռնում կամ այլ իրավասու մարմնի կողմից պատասխանատվության միջոցի կիրառման պահանջ*», որի կապակցությամբ կրկին սահմանվում է «*օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված լինելու*» պահանջ:

F) ԵՄ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ

Հարկ է նշել, որ 2019 թվականի ապրիլի 16-ին ԵՄ խորհրդարանն ընդունել է N 2019/1937 հրահանգը, որը սահմանում է ազդարարների պաշտպանության «ընդհանուր նվազագույն չափորոշիչներ»:³ Վերջինիս համաձայն՝ անդամ պետություններից պահանջվում է նշանակել իրավասու մարմիններ՝ ԵՄ օրենսդրության խախտման մասին ազդարարումներ ստանալու և հետամուտ լինելու նպատակով այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են պետական գնումները, ֆինանսական ծառայությունները, սպառողների պաշտպանությունը և այլն: Այս իրավասու մարմինները կարող են տարբեր լինել՝ ըստ ոլորտների, և կարող են ներառել գործող մարմինները: Անդամ

³ Office of the European Union, Directive (EU) 2019/1937 of the European Parliament and of the Council of 23 October 2019 on the protection of persons who report breaches of Union law. Official Journal of the European Union, L 305/17-L 305/40, available at: <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32019L1937>.

պետություններին խրախուսվում է ստեղծել կենտրոնացված ազդարարման խողովակներ կամ մարմիններ, եթե կարծում են, որ այդ մոդելն ավելի արդյունավետ կլինի ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար: Այնուամենայնիվ, հրահանգը չի սահմանում բոլոր ոլորտների համար պատասխանատու մեկ կենտրոնական իրավասու մարմին ունենալու պահանջ: Կարևորվում է նաև, որ այն գործակալությունները, որոնք տեղեկատվություն են ստանում ազդարարներից, ունենան համապատասխան ընթացակարգեր, որոնք տեղեկացնում են ազդարարին գործի հետագա ընթացքի վերաբերյալ: Այս ընթացակարգերը իդեալականորեն պետք է ներառեն գործընթացի տարբեր փուլերի ժամանակացույցեր: ԵՄ խորհրդարանի հրահանգը սահմանում է, որ իրավասու մարմինները պետք է արձագանքեն ազդարարումներին՝ դրանք ստանալուց հետո յոթ օրվա ընթացքում և հետադարձ կապ տրամադրեն ազդարարին երեք կամ պատշաճ հիմնավորված դեպքերում՝ վեց ամսվա ընթացքում:⁴

Բացի այդ, երրորդ կողմերը ևս կարող են իրավասու լինել մասնավոր և պետական հատվածի իրավաբանական անձանց անունից ստանալ խախտումների մասին ազդարարումներ՝ պայմանով, որ վերջիններս կապահովեն անկախության, գաղտնիության և տվյալների պաշտպանության համապատասխան երաշխիքներ: Որպես նման երրորդ կողմ կարող են հանդես գալ արտաքին ազդարարման հարթակներ գործարկող կառույցները (օրինակ՝ մասնագիտացված հասարակական կազմակերպություններ, գործարար կազմակերպություններ), արտաքին խորհրդատուները, աուդիտորները, արհմիությունների ներկայացուցիչներ, աշխատողների ներկայացուցիչներ և այլն:⁵

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁ

Ա) ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Վերադառնալով միջազգային պրակտիկայում հայտնի ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների մոդելներին՝ կարելի է փաստել, որ՝ թվով շատ քիչ երկրներում է, որ առհասարակ առկա չէ ազդարարման հարցերով պատասխանատու կենտրոնական մարմին, որն իրավասու է իրականացնել վերահսկող և իրավակիրառ գործառույթներ: Երկրների մեծամասնությունում առկա են ազդարարման հարցերով պատասխանատու կենտրոնական մարմիններ: Միևնույն ժամանակ, մեկ պատասխանատու կենտրոնական մարմին ունենալը չի բացառում որոշակի ոլորտային այլ պատասխանատու մարմինների սահմանումը: Այս կապակցությամբ միջազգային պրակտիկան կրկին միատարր չէ, քանի որ հանդիպում են երկրներ, որտեղ՝ առկա է մեկ պատասխանատու կենտրոնական մարմին, և որևէ այլ ոլորտային պատասխանատու մարմին առկա չէ, կամ առկա է մեկ պատասխանատու կենտրոնական մարմին, և մեկ կամ մի քանի այլ ոլորտային

⁴ *Ibid*, art.11(b) and (d).

⁵ *Ibid*, Preamble, Clause 54.

պատասխանատու մարմիններ, որոնց նկատմամբ, որպես կանոն, կենտրոնական մարմինն իրավասու է իրականացնել վերահսկող գործառույթներ և/կամ, բոլոր այն ոլորտներում, որտեղ ոլորտային մարմին սահմանված չէ, ազդարարումներ ստանալու և դրանց ընթացք տալու լիազորությունը վերապահված է ազդարարման կենտրոնական մարմնին:

Հարկ է նաև ընդգծել, որ պետությունները կարող են կամ ստեղծել ազդարարման հարցերով հատուկ լիազոր մարմին կամ նման լիազորություններ և գործառույթներ տրամադրել անձանց կամ ստորաբաժանմանը՝ արդեն իսկ գոյություն ունեցող գերատեսչություններում: Պետությունները կարող են դիտարկել ազդարարման հարցերով հատուկ լիազոր մարմին ստեղծելու հնարավորությունը, որպեսզի ապահովեն ազդարարումներով զբաղվող՝ բարձր տեսանելիությամբ և մասնագիտացվածությամբ գործակալության առկայությունը: Միևույն ժամանակ, նման մարմնի ստեղծումը կարող է պահանջել զգալի ռեսուրսներ և լինել ժամանակատար, հատկապես սուղ ռեսուրսների ու ֆինանսավորման հնարավորությունների պարագայում: Այս հանգամանքներում գոյություն ունեցող գործակալությունների օգտագործումը կարող է ավելի արդյունավետ լինել, քանի որ պետությունները կարող են օգտվել այդ մարմինների ձևավորված փորձից և կարողություններից և ստեղծել ազդարարման համակարգեր գործող մարմինների հենքի վրա:

Այսպիսով, եթե ամփոփենք միջազգայի պրակտիկայում, մասնավորապես՝ ԵՄ և Արևելյան գործընկերության (այսուհետ՝ ԱլԳ) երկրներում առկա մոդելները, ապա կունենանք հետևյալ պատկերը՝

- **Ազդարարման հարցերով պատասխանատու մարմին, որը ստեղծվել է հատուկ այդ նպատակով և իրականացնում է բացառապես ազդարարներին առնչվող գործառույթներ:** Նշյալ մոդելն է կիրառվում, օրինակ, Նիդեռլանդներում (Ազդարարման հարցերով իրավասու մարմին⁶), Սլովակիայում (Ազդարարների պաշտպանության գրասենյակ⁷), Իռլանդիայում (Պաշտպանված ազդարարման հանձնակատարի գրասենյակ⁸), Լյուքսեմբուրգ (Հաղորդումների գրասենյակ⁹), Իսպանիա (Ինֆորմատորների

⁶ House for Whistle-blowers; Whistleblowers Protection Act No 147, adopted: April 14, 2016, Chapter 2. available at: <https://www.wetbeschermingklokkenluiders.nl/wetstraject/wetstekst>.

⁷ Whistleblower Protection Office; Act No. 54/2019 on the Protection of Whistleblowers of Anti-Social Activities and on Amendments to Certain Acts, Article 1, clause 13, adopted: January 30, 2019, available at: <https://www.zakonypreludi.sk/zz/2019-54>.

⁸ Office of the Protected Disclosures Commissioner; Protected Disclosures Act 2014 (Revised), adopted: July 8, 2014, Part 2A, available at: <https://revisedacts.lawreform.ie/eli/2014/act/14/front/revised/en/html>.

⁹ Reporting Office; Law of 16 May, 2023 (Loi du 16 mai 2023 portant transposition de la directive (UE) 2019/1937 du Parlement européen et du Conseil du 23 octobre 2019 sur la protection des personnes qui signalent des violations du droit de l'Union), adopted: May 16, 2023, Chapter 3, available at: <https://legilux.public.lu/eli/etat/leg/loi/2023/05/16/a232/jo>.

պաշտպանության ազգային գործակալություն¹⁰): Մինևույն ժամանակ, նշյալ մոդելի պարագայում կարող են առկա լինել նաև այլ ոլորտային պատասխանատու ազդարարման մարմիններ, օրինակ՝ Նիդեռլանդներ, որոնց մասին առավել մանրամասն կխոսվի ստորև:

- **Ազդարարման ոլորտում կենտրոնական լիազորություններով օժտված՝ արդեն իսկ գոյություն ունեցող այլ մարմին՝ որպես կանոն համապատասխան ստորաբաժանման կամ մասնագիտացված աշխատակազմի առկայությամբ:** Այս մոդելը որդեգրելու պարագայում նշյալ գործառույթն առավել հաճախ իրականացվում է հետևյալ մարմինների կողմից՝
 - Կոռուպցիայի կանխարգելմամբ և/կամ կոռուպցիայի դեմ պայքարի մարմին, օրինակ՝ Ուկրաինա (Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալություն¹¹), Ավստրիա (Կոռուպցիայի դեմ պայքարի և կոռուպցիայի կանխարգելման դաշնային գրասենյակ¹²), Հունաստան (Ազգային թափանցիկության մարմին¹³), Իտալիա (Ազգային հակակոռուպցիոն մարմին¹⁴), Պորտուգալիա (Ազգային հակակոռուպցիոն մեխանիզմ¹⁵), Ռումինիա (Ազգային բարեվարքության գործակալություն¹⁶):

¹⁰ Independent Authority for the Protection of Informants; Law No 2/2023 (Ley 2/2023, de 20 de febrero, reguladora de la protección de las personas que informen sobre infracciones normativas y de lucha contra la corrupción), adopted: February 20, 2023, Title III, available at: <https://www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-2023-4513>.

¹¹ National Agency on Corruption Prevention; Law on Prevention of Corruption, adopted: October 14, 2014, articles 11(13), 12, available at: [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2020\)079-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2020)079-e)

¹² The Federal Office for Preventing and Combating Corruption; Whistleblower Protection Act (HinweisgeberInnenschutzgesetz), adopted: February 16, 2023, Article 1, clause 15, available at: https://www.parlament.gv.at/dokument/XXVII/BNR/695/fname_1517294.pdf.

¹³ National Transparency Authority; Law No 4990/2022 on the protection of persons reporting violations of Union law, adopted: November 11, 2022, Article 11, available at: <https://www.lawspot.gr/nomikes-plirofories/nomothesia/nomos-4990-2022>.

¹⁴ National Anti-Corruption Authority; Legislative Decree No 24/2023, adopted: 10 March, 2023, Articles 7-11, available at: <https://www.normattiva.it/uri-res/N2Ls?urn:nir:stato:decreto.legislativo:2023:024>.

¹⁵ National Anti-Corruption Mechanism; Law No 93/2021 on General regime for the protection of persons who report violations, adopted: December 20, 2021, Article 12, available at: <https://diariodarepublica.pt/dr/detalhe/lei/93-2021-176147929>.

¹⁶ National Integrity Agency, Law no. 361/2022 on the protection of whistleblowers in the public interest, adopted: December 13, 2022, Article 17, available at: <https://senat.ro/legis/PDF/2022/22L175PX.PDF>.

- Արդարադատության նախարարություն, օրինակ՝ Չեխիա¹⁷, Գերմանիա (Արդարադատության դաշնային նախարարության ներքո գործող Արդարադատության դաշնային գրասենյակ¹⁸),
- Իրավապահ մարմիններ, օրինակ՝ Դատախազություն (Լիտվա)¹⁹,
- Անձնական տվյալների պաշտպանությամբ զբաղվող մարմին, օրինակ՝ Բուլղարիա²⁰, Դանիա²¹,
- Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, օրինակ՝ Հունգարիա (Վարչաշրջանի և կառավարության գրասենյակի աշխատանքի և առողջապահական և անվտանգության վարչություն²²), Շվեդիա (Աշխատանքային միջավայրի մարմին²³): Հարկ է ընդգծել, որ որոշ երկրներում նշյալ մարմինը սահմանված է որպես ոլորտային իրավասու մարմին, երբ առկա է այլ կենտրոնական մարմին, օրինակ՝ Չեխիա:

¹⁷ Ministry of Justice; Whistleblower Protection Act no. 171/2023, adopted: June 2, 2023, Title 3, available at: <https://www.zakonyprolidi.cz/cs/2023-171>.

¹⁸ Federal Office of Justice; Whistleblower Protection Act (Gesetz für einen besseren Schutz hinweisgebender Personen sowie zur Umsetzung der Richtlinie zum Schutz von Personen, die Verstöße gegen das Unionsrecht melden - Hinweisgeberschutzgesetz), Article 1, clause 17, adopted: May 12, 2023, available at: <https://www.recht.bund.de/bgbl/1/2023/140/VO.html>.

¹⁹ Prosecutor's Office; Law on the Protection of Whistleblowers No. XIII-804, adopted: December 16, 2021, Article 5, available at: <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAP/ad4bf270487211eca8a1caec3ec4b244>.

²⁰ Commission for Personal Data Protection, Law on the Protection of Whistleblowers or Public Disclosures of Infringements, adopted: January 27, 2023, Article 19, available at: <https://dv.parliament.bg/DVWeb/showMaterialDV.jsp?idMat=185482>.

²¹ Datatilsynet, the Danish data protection authority; Whistleblowers Protection Act no. 1436 (Lov om beskyttelse af whistleblowere), adopted: June 29, 2021, Article 17, available at: <https://www.retsinformation.dk/eli/lta/2021/1436>.

²² Labour and Occupational Health and Safety Department of County and Government Offices; Act XXV of 2023 on complaints, public interest disclosures, and the rules on reporting abuse regulating the protection of persons who report breaches of the law and on combating corruption, adopted, Article 29, available at: <https://net.jogtar.hu/jogszabaly?docid=a2300025.tv>.

²³ Work Environment Authority; Act No 2021:890 on the protection of persons who report misconduct (Lag om skydd för personer som rapporterar om missförhållanden), adopted: September 29, 2021, Chapter 10, available at: <https://www.riksdagen.se/sv/dokument-och-lagar/dokument/svensk-forfattningssamling/lag-2021890-om-skydd-for-personer-som-sfs-2021-890/#K10>; Ordinance on the protection of persons who report misconduct, issued: October 28, 2021, Chapter 3, available at: <https://svenskfattningssamling.se/sites/default/files/sfs/2021-10/SFS2021-949.pdf>.

- Մարդու իրավունքների պաշտպան/Արդարադատության կանցլեր, օրինակ՝ Ֆրանսիա²⁴, Բելգիա²⁵, Խորվաթիա²⁶, Ֆինլանդիա²⁷,
- Այլ մարմիններ, օրինակ՝ Լատվիա (Պետական կանցլեր²⁸):

Հարկ է նշել, որ այդ մոդելի պարագայում ևս խոսքը գնում է ազդարարման հարցերով պատասխանատու կենտրոնական մարմին ունենալու մասին, ինչը չի բացառում այլ ոլորտային պատասխանատու մարմինների առկայությունը (օրինակ՝ Չեխիա, Շվեդիա, Պորտուգալիա, Լատվիա, Ֆրանսիա, Բելգիա, Ավստրիա):

- **Ապակենտրոնացված մոդել՝ ազդարարմանն առնչվող գործառնությունների իրականացում տարբեր ոլորտային իրավասու մարմինների կողմից՝ առանց կենտրոնական մարմին սահմանելու:** Այս մոդելը գործում է, օրինակ, Մալթայում (մասնավոր հատվածում՝ Գլխավոր աուդիտոր, Եկամուտների հանձնակատար, Կամավորական կազմակերպությունների հանձնակատար, Ֆինանսական հետախուզության վերլուծության բաժին, Ֆինանսական ծառայությունների մարմին, Օմբուդսմեն, Կոռուպցիայի դեմ պայքարի մշտական հանձնաժողով (մասնավոր հատված); Կառավարության կազմում գտնվող Արտաքին ազդարարման բաժին (պետական հատված)²⁹, Սլովենիայում (Կապի ցանցերի և ծառայությունների գործակալություն, Արժեթղթերի շուկայի գործակալություն, Մրցակցության պաշտպանության հանրային գործակալություն, Երթևեկության անվտանգության հանրային գործակալություն, Ապահովագրության վերահսկողության գործակալություն, Հանրային աուդիտի վերահսկողության գործակալություն, Սլովենիայի բանկ, Պետական գնումների ընթացակարգերի աուդիտի ազգային աուդիտի հանձնաժողով,

²⁴ Defender of Rights; Law no 2011-333 (LOI organique n° 2011-333 du 29 mars 2011 relative au Défenseur des droits), adopted: March 29, 2011, Articles 5, Clause 4; 35-1, available at: <https://www.legifrance.gouv.fr/loda/id/JORFTEXT000023781167>.

²⁵ Federal Ombudsmen; Law on the protection of persons who report violations of Union or national law found within a legal entity of the private sector, adopted: November 28, 2022, Article 7, Clause 6, available at: <https://www.ejustice.just.fgov.be/eli/loi/2022/11/28/2022042980/moniteur#top>.

²⁶ Ombudswoman, Law no 46/2022 on the Protection of Reporters of Irregularities, adopted: April 8, 2022, Article 24, available at: https://narodne-novine.nn.hr/clanci/sluzbeni/2022_04_46_572.html.

²⁷ Office of the Chancellor of Justice; Act 1171/2022 on the protection of persons reporting violations of European Union and national law (Laki Euroopan unionin ja kansallisen oikeuden rikkomisesta ilmoittavien henkilöiden suojelusta), adopted: December 20, 2022: Section 18, available at: <https://www.finlex.fi/fi/laki/alkup/2022/20221171>.

²⁸ State Chancellery; Whistleblowing Act (Trauksmes celšanas likums), adopted: January 20, 2022, Article 8, available at: <https://likumi.lv/ta/id/329680-trauksmes-celsanas-likums>.

²⁹ Auditor General, Commissioner for Revenue, Commissioner for Voluntary Organisations, Financial Intelligence Analysis Unit, Malta Financial Services Authority, Ombudsman, Permanent Commission Against Corruption (private sector); External Disclosure Whistleblowing Unit within the Government of Malta (public administration); Protection of the Whistleblower Act VIII (CAP 527 of the Laws of Malta), First Schedule, adopted: September 15, 2013, available at: <https://legislation.mt/eli/cap/527/eng/pdf>.

Ֆինանսական կառավարման մարմին, Շուկայի տեսչություն, Փողերի լվացման կանխարգելման գրասենյակ, Տեղեկատվության հանձնակատար, որն օրենքի համաձայն ունի ազդարարներին խորհուրդ տալու հատուկ լիազորություններ, Տեղեկատվական անվտանգության տեսչություն, Ճառագայթային և միջուկային անվտանգության տեսչություն, Ճառագայթումից պաշտպանության տեսչություն, Անվտանգ սննդի, անասնաբուժության և բույսերի պաշտպանության տեսչություն, Աշխատանքի տեսչություն, Հանրային հատվածի տեսչություն, Շրջակա միջավայրի և տարածության տեսչություն, դեղերի և բժշկական սարքերի հանրային գործակալություն, վերահսկիչ մարմիններ՝ համաձայն Սլովենիայի Հանրապետությունում եվրոպական համախմբման քաղաքականության միջոցների օգտագործումը կարգավորող կանոնակարգերի, Առողջապահական տեսչություն, Սլովենիայի պետական հոլդինգ և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով³⁰):

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ մոդելի/ենթամոդելի ընտրությունից է, որպես կանոն, կախված այն հանգամանքը, արդյոք կենտրոնական մարմինն օժտված է ազդարարումների հետ կապված հարցերով քննություն իրականացնելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու մեխանիզմներով, թե՛ ոչ: Օրինակ, մարդու իրավունքների պաշտպանին նման լիազորություն վերապահող երկրներում, որպես կանոն, վերջիններս կամ օժտված են մասնակի քննություն իրականացնելու մեխանիզմներով՝ առանց պատասխանատվության միջոցներ կիրառելու մեխանիզմների (օրինակ՝ Խորվաթիա), կամ՝ առհասարակ օժտված չեն որևէ նման լիազորությամբ, այլ՝ վերջիններիս վերապահված է միմիայն ազդարարների աջակցության լիազորություն (օրինակ՝ Ֆինլանդիա, Ֆրանսիա): Միննույն ժամանակ, ապակենտրոնացված մոդելի պարագայում ևս պատահում են նման դեպքեր, երբ մարմիններն օժտված չեն վերոնշյալ լիազորություններով, օրինակ՝ Մալթա:

Այժմ առավել մանրամասն կներկայացվեն ազդարարման ոլորտում համապարփակ լիազորություններ ունեցող մարմինների օրինակներ:

³⁰ Agency for Communication Networks and Services, Securities Market Agency, The Public Agency for the Protection of Competition, Public Agency for Traffic Safety, Agency for Insurance Supervision, Agency for Public Audit Oversight, Bank of Slovenia, National Audit Commission for the Audit of Public Procurement Procedures, Financial Administration, Market Inspectorate, Office for the Prevention of Money Laundering, Information Commissioner, Information Security Inspection, Inspection for radiation and nuclear safety, Inspection for protection against radiation, Inspection for safe food, veterinary medicine and plant protection, Labor Inspectorate, Public Sector Inspectorate, Inspectorate for Environment and Space, Public Agency for Medicines and Medical Devices, supervisory authorities in accordance with the regulations governing the use of European cohesion policy funds in the Republic of Slovenia, Health Inspectorate, Slovenian state holding and Commission for the Prevention of Corruption; Whistleblower Protection Act 301 (Zakon o zaščiti prijaviteljev (ZZPri), adopted: January 27, 2023, Chapter 5 and Article 14, available at: <https://www.uradni-list.si/glasilo-uradni-list-rs/vsebina/2023-01-0301?sop=2023-01-0301>.

ՍԼՈՎԱԿԻԱ

Ազդարարների պաշտպանության գրասենյակը ստեղծվել է Սլովակիայի «Ազդարարների պաշտպանության մասին» թիվ 54/2019 օրենքի հիման վրա՝ որպես բյուջետային կազմակերպություն, որը հաշվետու է Սլովակիայի Հանրապետության ազգային խորհրդին (խորհրդարանին): Այն անկախ պետական մարմին է՝ համապետական լիազորություններով: Գրասենյակը պաշտոնապես սկսել է գործել 2021 թվականի սեպտեմբերի 2-ին: Նրա գործունեությունը կենտրոնացած է ազդարարների պաշտպանության և հարակից օրակարգի վրա: Գրասենյակը ղեկավարում է նախագահը, որը պատասխանատու է գրասենյակի գործունեության համար: Գրասենյակի ղեկավարին ընտրում և պաշտոնից ազատում է Ազգային խորհուրդը կառավարության առաջարկած թեկնածուներից:

Գործառույթներ: Գրասենյակի հիմնական գործառույթներն են՝

1. Իր իրավասության ոլորտին առնչվող արտաքին ազդարարումների ստացում և քննություն:

Գրասենյակը ստանում է ազդարարումներ կոռուպցիայի, խարդախության, օրենքի լուրջ խախտումների կամ հանրային շահը վտանգող այլ անարդար պրակտիկաների վերաբերյալ: Ազդարարումներն իրականացվում են կայքում տեղադրված առցանց ձևաթղթի, ինչպես նաև հեռախոսային թեժ գծի միջոցով, որով ստացված զանգերը ձայնագրվում են և պահպանվում են: Սխալ վարքագիծ է դիտարկվում ազդարարի կողմից՝ իր աշխատանքի ընթացքում, պարտականությունների կատարման կամ իր մասնագիտության իրականացման ժամանակ հայտնաբերված վարքագիծը: Ամենալուրջ դեպքերում, երբ կարևոր է պաշտպանել ազդարարների ինքնությունը, գրասենյակն ազդարարի անունից դիմում է քրեական հետապնդման մարմիններին:

2. Ազդարարների պաշտպանություն: Գրասենյակն ապահովում է կանխարգելիչ և հետագա պաշտպանություն: Այն պաշտպանում է «պաշտպանված ազդարարներին»՝ գործատուի կողմից ազդարարի հանդեպ կիրառված ցանկացած վնասակար գործողությունից, որը կապված է նրանց ազդարարման հետ: Պաշտպանված ազդարարի կարգավիճակ չունեցող ազդարարների դեպքում գրասենյակը 30 օրով կասեցնում է նրանց աշխատանքից ազատումը, որն իրականացվել է որպես վնասակար գործողություն՝ ի պատասխան գործընկերոջ, ղեկավարի կամ գործատուի սխալ վարքագիծը մատնանշող ազդարարման: Բացի այդ, գրասենյակը ինքնաշխատ եղանակով տեղեկանում է այն անձանց մասին, որոնք այլ իրավասու մարմինների կողմից ստացել են պաշտպանված ազդարարի կարգավիճակ:

Գրասենյակն իրականացնում է վերահսկողություն ազդարարներին պաշտպանության տրամադրման և դրա իրականացման նկատմամբ: Գրասենյակն իրավասու է մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ վարչական վարույթին, որի դեպքում ազդարարին տրամադրվել է պաշտպանություն և դատական վարույթներին, եթե դատավարության կողմերից մեկն ազդարար է:

3. **Խորհրդատվություն և աջակցություն:** Գրասենյակն անվճար իրավաբանական խորհրդատվություն է տրամադրում այն ազդարարներին, ովքեր ցանկանում են ազդարարել: Խորհրդատվությունն իրականացվում է հեռախոսային թեժ գծի միջոցով: Բացի այդ, գրասենյակն իրականացնում է հոգեւոցիալական աջակցության ծրագրերի փորձնական փուլը, որը ներառում է հանդիպումների կազմակերպում և ֆինանսավորում կարիերայի ուղղորդման մասնագետների և հոգեթերապևտի հետ: Գրասենյակը նաև աջակցում է գործատուներին իրենց կազմակերպություններում ազդարարման բարդ գործերի քննության հարցում:
4. **Կենտրոնական վերահսկողություն:** Գրասենյակն իրականացնում է վերահսկողություն օրենքի, այդ թվում՝ ներքին ազդարարման համակարգերին առնչվող դրույթների պատշաճ կիրարկման նկատմամբ: Այդ նպատակով գրասենյակն իրականացրել է ներքին ազդարարման համակարգերի քարտեզագրում:
5. **Վիճակագրություն:** Գրասենյակն ունի ազդարարմանն առնչվող ընդհանուր վիճակագրություն վարելու և հրապարակելու պարտավորություն: 2022 թվականին գրասենյակին դիմել է 377 անձ, որից թեժ գծի միջոցով ստացվել է 157 զանգ: Գրասենյակը վարել է 220 գործ, որոնցից 96-ն ընկել է թիվ 54/2019 օրենքով սահմանված՝ իր լիազորությունների շրջանակում: Սա ներառում է ստացված ազդարարումները, ազդարարների պաշտպանության օրակարգը, ինչպես նաև, օրինակ, իրավաբանական խորհրդատվությունը գործատուներին և այլ իրավաբանական անձանց: Ազդարարների հետ կապված 63 դեպքերից 17-ը հանգեցրել են գործատուների կողմից վնասակար գործողությունների: Տրվել է ազդարարի 9 նոր պաշտպանված կարգավիճակ, որոնցից երկուսը՝ գրասենյակի աջակցությամբ:
6. **Կանխարգելում և իրազեկում:** Գրասենյակը կազմում է ազդարարների պաշտպանությանն առնչվող մասնագիտական կարծիքներ և մեթոդական ուղեցույցներ (օրինակ՝ հանրային հատվածում արդյունավետ ներքին ազդարարման համակարգի ձեռնարկ), ապահովում է ներքին ազդարարման պատասխանատու անձանց գործնական ուսուցումը և վերապատրաստումը, աջակցում է գործատուներին իրենց կազմակերպություններում ազդարարման ներքին մեխանիզմների նախագծման/ներդրման հարցում, համագործակցում է պետական մարմինների հետ իրավական կարգավորումների ստեղծման գործում և առաջարկություններ է ներկայացնում պետական կառավարման կենտրոնական

մարմիններին՝ սեփական եզրակացությունների և գիտելիքների հիման վրա դրանց փոփոխության համար:

- 7. Միջազգային համագործակցություն:** Գրասենյակը հանդիսանում է Եվրոպական բարեկարգության և ազդարարման հարցերով իրավասու մարմինների ցանցի ակտիվ անդամ: Այն ԵՄ անդամ պետությունների պետական մարմիններից կազմված ցանց է, որը հիմնականում ծառայում է որպես ազդարարների պաշտպանության ոլորտում գիտելիքների և փորձի փոխանակման հարթակ, ինչպես նաև՝ որպես ԵՄ ազդարարների պաշտպանության վերաբերյալ N 2019/1937 հրահանգի կիրարկման գործընթացը ոչ պաշտոնապես վերահսկող խումբ:³¹

Լիազորություններ: Վերոնշյալ գործառնությունների իրականացման նպատակով գրասենյակն իրավասու է՝ պահանջել ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր, այդ թվում՝ կազմակերպությունների կողմից իրականացված ներքին քննության արդյունքները, պահանջել բացատրություններ և ուսումնասիրել ազդարարմանն ընթացք տալու մեթոդը ու դրա արդյունավետությունը, ահազանգել պետական մարմինների ղեկավարներին ազդարարմանն ընթացք տալու քայլերի ոչ բավարար կամ սխալ լինելու մասին և պահանջել ուղղում, ծանուցել գործատուին, որ վերջինիս կողմից ազդարարի հանդեպ կիրառվելիք աշխատանքային ակտը կարող է խախտել օրենքի դրույթները, գործատուին խորհուրդ տալ միջոցներ ձեռնարկել օրենքի համապատասխանությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև՝ սահմանել տուգանքներ:

Կառուցվածք: Գրասենյակի օրակարգն իրականացվում է երկու ստորաբաժանումների կողմից՝ իրավաբանական վարչություն, որտեղ ազդարարման հիմնական ծառայությունը մատուցվում է հինգ իրավաբանների կողմից, և կանխարգելման և հաղորդակցության վարչություն՝ հինգ աշխատակիցներով, որը ներառում է գրասենյակի կրթական գործունեությունը, ձեռնարկների մշակումը, ՋԼՄ-ների և հանրության հետ շփումը և գործընկերային հարաբերությունների զարգացումը: Գրասենյակի կազմակերպչական կառուցվածքը ներառում է վերլուծական բաժինը, որը առանցքային է շրջակա միջավայրի քարտեզագրման, հասարակական կարծիքի, հարցումների, տվյալների հավաքագրման և վերլուծության համար:³²

Այլ մարմիններ: Օրենքի հիման վրա արտաքին ազդարարումներ ստանալու համար պատասխանատու մարմիններ են նաև դատախազությունը, օրենքի իմաստով հակահասարակական գործունեություն հանդիսացող տվյալ վարչական իրավախախտման

³¹ Network of European Integrity and Whistleblowing Authorities, available at: <https://www.huisvoorklokkenuiders.nl/samenwerking/internationaal/europees-netwerk>.

³² Whistleblower Protection Office of Slovakia, official website: <https://www.oznamovatelja.sk/en/chcem-oznamit/>; The Whistleblower Protection Office 2022 Annual Report, available at: <https://www.oznamovatelja.sk/wp-content/uploads/2023/06/annual-report-2022.pdf>.

վարույթի համար պատասխանատու վարչական մարմինը, կամ Եվրոպական միության համապատասխան հաստատությունը, մարմինը, գրասենյակը կամ գործակալությունը:

ՆԻՂԵՈՒԱՆԴՆԵՐ

Ազդարարման հարցերով իրավասու մարմինը, որը ստեղծվել է Նիդեռլանդներ «Ազդարարների պաշտպանության մասին» 2016 թվականի ապրիլի 14-ի թիվ 147 օրենքի հիման վրա, անկախ վարչական մարմին է, որը հաշվետու է միայն խորհրդարանին (ամենամյա հաշվետվության տեսքով) և Ներքին գործերի և Թագավորության հարաբերությունների նախարարին իր ֆինանսական գործառնությունների համար: Ներքին գործերի և թագավորության հարաբերությունների նախարարը իրավասու չէ որոշել մարմնի քաղաքականությունը և բեկանել մարմնի ընդունած որոշումները, ինչպես նաև տեղեկատվություն պահանջել այն հարցերի վերաբերյալ, որոնցով զբաղվում է մարմինը: Մարմնի խորհուրդը բաղկացած է նախագահից և առավելագույնը չորս անդամից, որոնք նշանակվում են թագավորական հրամանագրով: Մարմնի կառավարմանն աջակցում է գրասենյակը:

Գործառնություններ: Մարմինն իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

- **Իր իրավասության ոլորտին առնչվող արտաքին ազդարարումների ստացում և ի պաշտոնե քննություն, որը ներառում է՝**
 - **հանրային շահը վտանգող՝ ենթադրյալ անօրինական գործողության քննություն.** Իրականացված քննության հիման վրա մարմինն իրավասու է ներկայացնել հանձնարարականներ:
 - **ազդարարների հանդեպ կիրառվող՝ ենթադրյալ վնասակար գործողության քննություն (ազդարարների պաշտպանություն).** Եթե քննության արդյունքերով պարզվում է, որ ազդարարման արդյունքում իրապես տեղի են ունեցել վնասակար գործողություններ, ապա ազդարարները կարող են փոխհատուցում պահանջելու ընթացակարգ սկսել:
- **Խորհրդատվություն և աջակցություն:** Մարմինը՝ 1) տեղեկացնում և խորհուրդ է տալիս ֆիզիկական անձին, ով ներկայացրել է կամ մտադիր է ներկայացնել ազդարարում իր աշխատանքային գործունեության համատեքստում, այդ անձին աջակցող անձին և ներգրավված երրորդ անձին ենթադրյալ անօրինական վարքագծի կապակցությամբ ձեռնարկվելիք քայլերի և այդ անձանց իրավունքների մասին, 2) ուղղորդում է դեպի վարչական մարմիններ կամ ծառայություններ, որոնք

պատասխանատու են քրեական հանցագործությունների հետաքննության կամ որևէ այլ օրենսդրական դրույթների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման համար, կամ որևէ այլ իրավասու մարմնի, որտեղ կարող են ազդարարել ենթադրյալ իրավախախտման մասին, 3) ուղղորդում է դեպի գործակալություններ կամ կազմակերպություններ, որոնք կարող են տրամադրել իրավաբանական կամ հոգեւոցիալական աջակցություն և 4) տրամադրում է ընդհանուր տեղեկատվություն ենթադրյալ իրավախախտման կապակցությամբ:

- **Կենտրոնական վերահսկողություն:** Մարմինն իրականացնում է վերահսկողություն օրենքի պահանջների կիրարկման նկատմամբ և այդ նպատակով օժտված է վարչաիրավական լիազորություններով: Օրինակ՝ օրենքի պահանջների խախտման համար կարող է հավելյալ տույժեր կամ վարչական տուգանք նշանակել գործատուի (թե՛ հանրային, թե՛ մասնավոր ոլորտի) կողմից ներքին ազդարարման ընթացակարգերի ստեղծման և հասանելի դարձնելու պահանջների խախտման համար:
- **Վիճակագրություն:** Մարմինը նաև վարում և հրապարակում է իր գործունեության առնչվող ազդարարման վիճակագրություն: 2021 թվականին մարմինը ստացել է քննություն իրականացնելու 21 դիմում: 2016-2021 թվականներին ավարտված և ընթացիկ քննությունների 16%-ը վերաբերում է ենթադրյալ իրավախախտումներին, 53%-ը՝ վնասակար գործողություններին և 31%-ը՝ երկուսին էլ: 2021 թվականին մարմինը վարել է 289 խորհրդատվության գործ, որոնցից 208-ի կապակցությամբ ստացել է խորհրդատվության նոր գրավոր հարցում, իսկ 81-ը՝ առկա գործեր նախորդ տարիներից: 208 խորհրդատվության հարցումներից 11-ում հաստատվել է ենթադրյալ հակաօրինական արարք, որը կարող է վնասել հանրային շահերին, իսկ նախորդ տարիներից առկա 81 գործից՝ 19-ում, ընդհանուր առմամբ՝ 30 խորհրդատվական գործընթաց: Մարմնի խորհրդականները տվյալ տարվա ընթացքում պատասխանել են 249 հեռախոսազանգերի: 2021 թվականին մարմինը պատասխանել է գործատուների 179 հարցի: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ իր գործունեության առաջին տարիներին նշյալ թվերը շատ ավելի մեծ են եղել, օրինակ՝ 2017 թվականին՝ 1430 հարցի պատասխան:
- **Կանխարգելում և իրազեկում:** Մարմնի գործունեությունն ուղղված է գիտելիքներ խթանելուն՝ միտված այնպիսի կազմակերպչական մշակույթի ձևավորմանը, որտեղ աշխատանքի հետ կապված ենթադրյալ չարաշահումների մասին

հաղորդումները մշակվում են զգույշ և արդյունավետ կերպով: Այս կապակցությամբ մարմինը 1) անմիջական կապ է հաստատում գործատուների և մասնագետների հետ՝ նրանց տեղեկացնելու բարեվարք կառավարման և ազդարարման (ընթացակարգերի ներդրման) անհրաժեշտության մասին; 2) մշակում է իրագրական գրքույկներ և հոդվածներ բարեվարք կառավարման և ազդարարման ընթացակարգերի մասին, 3) մշակում է կազմակերպչական մշակույթը և բարեվարք կառավարման ջանքերը գնահատելու/չափելու գործիքներ, և 4) իրականացնում է բարեվարք կառավարման տարբեր ասպեկտների և ազդարարման վերաբերյալ հետազոտություններ: Բացի այդ, վերջին տարիներին մարմինն ակտիվացրել է իր ջանքերը՝ ուղղված օրենսդրական բարենպաստ դաշտի ստեղծմանը:

- **Միջազգային համագործակցություն:** Գրասենյակը նույնպես հանդիսանում է Եվրոպական բարեվարքության և ազդարարման հարցերով իրավասու մարմինների ցանցի ակտիվ անդամ:

Լիազորություններ: Այս առաջադրանքները կատարելիս մարմինը կարող է օգտագործել հետևյալ իրավասություններից որևէ մեկը՝ հանրային տիրույթում քննություն իրականացնել, ոստիկանության օգնությանը դիմել, տեղեկատվություն պահանջել, պահանջել գործատուի ներկայությունը, պահանջել գործատուին պատասխաններ ներկայացնել և լսել վկաներին, ինչպես նաև աշխատանքի ընդունել փորձագետների (օրինակ՝ հաշվապահության ոլորտում): Գործատուներին տրված հանձնարարականները չկատարելու կամ գործատուի կողմից ազդարարի հանդեպ վնասակար գործողություն կիրառելու պարագայում մարմինն օժտված է վարչաիրավական լիազորություններով, այդ թվում՝ իրավասու է նշանակել վարչական տուգանքներ և տույժեր:

Կառուցվածք: Խորհրդատվական և քննիչ գործառույթներն իրականացվում են համանուն երկու վարչություններից կողմից, որոնց միջև ձևավորվել է «չինական պատ»: Մասնավորապես, խորհրդի անդամը, ով ներգրավված է եղել ենթադրյալ չարաշահման վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու մեջ, չպետք է մասնակցի նույն չարաշահման մասով քննությանը: Թեև օրենքում նշված են միայն այս վարչությունները, ազդարարման մարմինն ունի նաև կանխարգելման վարչություն:³³

³³ Dutch Whistleblowers Authority, official website: <https://www.huisvoorklokkenuiders.nl/english>, 2021 Annual Report, available at: <https://www.huisvoorklokkenuiders.nl/Publicaties/jaarverslagen/2022/03/15/annual-report-dwa-2021>; 2017 Annual Report, available at: <https://www.huisvoorklokkenuiders.nl/Publicaties/jaarverslagen/2018/03/15/annual-report-2017---dutch-whistleblowers-authority>.

Այլ մարմիններ: Օրենքով որոշակի ոլորտների համար նշանակվել են նաև արտաքին ազդարարման այլ պատասխանատու մարմիններ՝

- Մպառողների և շուկայի մարմին,
- Ֆինանսական շուկաների մարմին,
- Տվյալների պաշտպանության մարմին,
- Կենտրոնական բանկ,
- Առողջապահության և երիտասարդության տեսչություն,
- Առողջապահական մարմին,
- Միջուկային անվտանգության և ճառագայթային պաշտպանության մարմին,
- Այլ մարմիններ:³⁴

Եթե իրավասու մարմինը ստանում է մեկ այլ իրավասու մարմնի իրավասության ներքո գտնվող ազդարարում, ապա վերջինս նշյալ ազդարարումը վերահասցեագրում է համապատասխան իրավասու մարմնին՝ ազդարարի համաձայնությունը նախապես ստանալու պայմանով:

ՈՒԿՐԱԻՆԱ

Ազդարարների պաշտպանության ոլորտում կենտրոնական իրավասու մարմինը Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալությունն է: Այս պարտականություններն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման վարչության ազդարարների հետ համագործակցության բաժինը: Վերջինս մասնագիտացված է բացառապես ազդարարների պաշտպանության իրականացման հարցերով: Ազդարարման ոլորտի լիազորությունները մարմնին են վերապահվել գործակալության ստեղծումից ի վեր՝ 2014 թվականի հոկտեմբերի 14-ին ընդունված Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի հիման վրա: Միևնույն ժամանակ, տարիների ընթացքում վերջինիս լիազորությունները ընդլայնվել են, մասնավորապես՝ 2020 թվականի հունվարի 1-ին օրինական ուժի մեջ մտած «Ուկրաինայի «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում ազդարարման ոլորտում փոփոխություններ կատարելու» Ուկրաինայի թիվ 198-IX օրենքի դրույթների հիման վրա:

Գործառույթներ: Ազդարարների պաշտպանության ոլորտում մարմինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

³⁴ Consumer and Market Authority, Financial Markets Authority, Data Protection Authority (Autoriteit persoonsgegevens), Central Bank, Care and Youth Inspectorate, Health Care Authority, Nuclear Safety and Radiation Protection Authority.

- **Իր իրավասությունների ներքո գտնվող արտաքին ազդարարումների ստացում և քննություն:**

Մարմինը պարտավոր է ուսումնասիրել ստացված հաղորդումները և նախնական ստուգման ենթարկել դրանք՝ գնահատելու, արդյոք առկա են փաստական տվյալներ, որոնք հաստատում են, որ տեղի է ունեցել ենթադրյալ կոռուպցիա, կոռուպցիայի հետ կապված իրավախախտում կամ օրենքով նախատեսված այլ խախտում: Ստուգումը կարող է հանգեցնել ծառայողական քննության, որը պետք է անցկացվի նախնական ստուգման ավարտի օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում (անհրաժեշտության դեպքում դրա ժամկետը կարող է երկարացվել մինչև 45 աշխատանքային օր), կամ գործը կարող է ուղարկվել իրավապահ մարմիններին, եթե տեղեկատվությունը պարունակում է քրեական հանցագործության տարրեր: Ստուգման նպատակով անցկացվող քննությունը ներառում է փաստացի տվյալների ուսումնասիրություն և գնահատում, լրացուցիչ տեղեկատվության հավաքում, ստացված փաստական տվյալների և հավաքագրված տեղեկատվության վերլուծություն՝ որոշում կայացնելու հնարավոր կոռուպցիայի, կոռուպցիայի հետ կապված իրավախախտումը կամ օրենքի այլ խախտումները հաստատող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Եթե ազդարարման մեջ նշված փաստերը չհաստատվեն, վարույթն այստեղ ավարտվում է: Միննույն ժամանակ, ըստ Ուկրաինայի՝ ՏՀԶԿ 5-րդ պիլոտային մշտադիտարկման գնահատականի՝ մարմինն ունի ստուգման սահմանափակ գործիքակազմ. պրակտիկայում այն իրականացվում է միայն ազդարարի հանդեպ կիրառված վնասակար գործողությունների պարագայում: Նշյալը պայմանավորված է, մասնավորապես, Ուկրաինայի սահմանադրական դատարանի 2020 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 13-ք/2020 որոշմամբ:

- **Ազդարարների պաշտպանություն:** Մարմինը պարտավոր է համագործակցել ազդարարների հետ, ապահովել նրանց իրավական և այլ պաշտպանությունը, տալ հրամաններ, որոնք պահանջում են վերացնել ազդարարների աշխատանքային և այլ իրավունքների հետ կապված խախտումները, ինչպես նաև՝ վարույթ հարուցել ազդարարների հանդեպ կիրառված վնասակար գործողությունների գործերով: Բացի այդ, մարմինը հանդես է գալիս որպես անկախ խորհրդական դատարանում:

- **Խորհրդատվություն և աջակցություն:** Մարմինը ազդարարներին տրամադրում է բացատրություններ և աջակցություն օրենքով նախատեսված ազդարարի համար նախատեսված պաշտպանության միջոցների վերաբերյալ:

- **Կենտրոնական վերահսկողություն:** Մարմինն իրականացնում է ազդարարների պաշտպանության մասին օրենքի կիրարկման մոնիտորինգ: Այն վերահսկում է, որ ներքին և արտաքին ազդարարման խողովակները ստեղծվեն պետական մարմինների կողմից և համապատասխանեն օրենքի դրույթներին և իր կողմից այդ նպատակով մշակված ուղեցույցներին: Բացի այդ, մարմինն անցկացնում է ստուգումներ ազդարարումների

ներկայացման ընթացակարգերի և ներքին ազդարարման աշխատանքի արդյունավետության վերաբերյալ: Վերջինս կարող է հրաման տալ ազդարարման խողովակ ստեղծելու պարտականությունը չկատարելու դեպքում: Այս համատեքստում անհրաժեշտ է նշել, որ վերջինիս կողմից ստեղծվել և 2023 թվականի սեպտեմբերի 6-ից գործարկվել է ներքին ազդարարումների միասնական հարթակը, որին գործարկումից հետո 180-օրյա ժամկետում փուլային եղանակով նախատեսվում է միացնել ավելի քան 92,000 կառույցի: Հարթակով ներկայացված տեղեկատվությունը ստանալու են ոչ միայն մարմինների ղեկավարները և հակակոռուպցիոն պատասխանատուները, այլև՝ Կոռուպցիայի կանխարգելման ազգային մարմինը, Ազգային հակակոռուպցիոն բյուրոն, ոստիկանությունը և դատախազությունը:³⁵

- **Վիճակագրություն:** Կոռուպցիայի կանխարգելման մասին օրենքի կիրարկումը մշտադիտարկելու իր մանդատի շրջանակներում մարմինը կազմում է տարեկան հաշվետվություն և դրանում ընդգրկում է ազդարարման և կոռուպցիայի մասին ծանուցումների (քաղաքիների դիմումների)³⁶ ընդհանուր վիճակագրությունը, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտված անձանց, կոռուպցիոն իրավախախտումների հետևանքով պատժառված վնասի չափի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև այն անձանց թիվը, որոնց նկատմամբ կիրառվել են պաշտպանական միջոցներ՝ վնասակար գործողություններից պաշտպանելու նպատակով: 2020 թվականին Ոստիկանության կողմից ստացվել են 494, Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի կողմից՝ 15 ազդարարումներ, իսկ Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության կողմից՝ 3469 ծանուցում կոռուպցիայի մասին, որոնց 11%-ն է որակվել որպես ազդարարում: Բացի այդ, 2020 թվականին մարմինը տրամադրել է 49 խորհրդատվություն, աջակցել ազդարարներին՝ մասնակցելով 12 դատական լսումների և արձակել է 5 հրաման՝ վերականգնելու ազդարարի իրավունքները վնասակար գործողություններից:

³⁵ Unified Whistleblower Reporting Portal, official website: <https://whistleblowers.nazk.gov.ua/#/>; See also: “On September 6, the NACP launches the Unified Whistleblower Reporting Portal”, NACP website, available at: <https://nazk.gov.ua/en/news/on-september-6-the-nacp-launches-the-unified-whistleblower-reporting-portal/>.

³⁶ Օրենսդրությամբ ազդարարում է հանդիսանում (ա) քրեական հետապնդման մարմիններին ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ ներկայացված հաղորդումները (Քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 3(16²)) և (բ) ազդարարի կողմից՝ կոռուպցիայի, կոռուպցիայի հետ կապված իրավախախտման և «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի այլ խախտումների վերաբերյալ՝ իր աշխատանքային, մասնագիտական, տնտեսական, հասարակական, գիտական գործունեության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները ներքին, արտաքին կամ հանրությանն ազդարարման եղանակով հայտնելը («Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենք, հոդված 1): Արդյունքում, (բ) խմբին պատկանող, սակայն՝ աշխատանքային, մասնագիտական, տնտեսական, հասարակական, գիտական գործունեության արդյունքում ձեռք չբերված տեղեկությունները դիտարկվում են որպես քաղաքացիների բողոքներ:

- **Կանխարգելում և իրազեկում:** Մարմնի գործառույթների շարքին է պատկանում ազդարարման ոլորտի պետական քաղաքականության տարեկան վերանայումը, ինչպես նաև ազդարարումը խթանող իրազեկման ծրագրերի իրականացումը, իրազեկման նյութերի մշակումը և այլն:

Այլ մարմիններ: Ի սկզբանե, արտաքին ազդարարման խողովակները ստեղծվել էին միայն հակակոռուպցիոն ոլորտի սուբյեկտների՝ Ազգային հակակոռուպցիոն բյուրոյի³⁷, Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալության և Ոստիկանության կողմից: 2021 թվականի հունիսի 26-ին «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքում կատարված փոփոխությունները հստակեցրել և ընդլայնել են արտաքին ազդարարման խողովակներ ստեղծելու պարտավորություն ունեցող մարմինների ցանկը՝ ներառելով Հետաքննությունների պետական բյուրոն³⁸ և Գլխավոր դատախազությունը: Օրենքը պահանջում է նաև այլ պետական մարմիններից ևս (նախաքննական մարմիններ, համապատասխան ոլորտներում օրենքի համապատասխանությունը վերահսկելու համար պատասխանատու մարմիններ, պետական այլ մարմիններ, հիմնարկներ և կազմակերպություններ) ստեղծել արտաքին ազդարարման խողովակներ:

Իրավաբանական օգնությունը տրամադրվում է Արդարադատության նախարարությանն առընթեր Իրավաբանական օգնության տրամադրման համակարգող կենտրոնի և անվճար իրավաբանական օգնության կենտրոնների կողմից: 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի մայիսի 31-ը իրավաբանական օգնություն է ցուցաբերվել 31, հիմնականում՝ աշխատանքային գործերով:³⁹

³⁷ National Anti-Corruption Bureau of Ukraine.

³⁸ State Bureau of Investigation

³⁹ National Agency on Corruption Prevention, official website: <https://nazk.gov.ua/en/>; OECD (2022), Anti-Corruption Reforms in Ukraine: Pilot 5th Round of Monitoring Under the OECD Istanbul Anti-Corruption Action Plan, pp. 51-65, namely Benchmark 4.2.3.; available at: <https://doi.org/10.1787/b1901b8c-en>.

II. ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌՈՒ ՊՐԱԿՏԻԿԱ

ԱԶԳԱՐԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ՈՐՈՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԵՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ-ում գործում են ազդարարման ոլորտում իրավասու մի քանի մարմին, որոնց լիազորություններն ու գործառնությունները կներկայացվեն ստորև: Հարկ է նշել, որ չնայած «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված վերջին փոփոխություններին, վերջիններիս դերերը և դրանց բաշխումը հստակ սահմանված չէ ՀՀ օրենսդրությամբ, որի մասին բարձրաձայնվել է նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծում, որի կապակցությամբ գործողությունների ծրագրի նախագծի «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության ներքո առաջարկվում է հստակեցնել ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների դերերը⁴⁰: Այսպես.

Ա) ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում ազդարարման ոլորտում իրավասու մարմինների շարքում իր ուրույն դերն ունի ՀՀ գլխավոր դատախազությունը, որը «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ստանում է միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված ազդարարումները:⁴¹ Նույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «ՀՀ գլխավոր դատախազությունն իր իրավասության շրջանակներում ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը»: Նույն հոդվածի 1.1-ին, 3-րդ և 4-րդ մասերի վերլուծությունից պարզ է դառնում, որ հանցագործության հատկանիշներ պարունակող և միասնական էլեկտրոնային հարթակով ներկայացված հաղորդումը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստուգման նպատակով ՀՀ գլխավոր դատախազության կողմից վերահասցեագրում է օպերատիվ-

⁴⁰ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, շրջանառվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, քննարկվել է 13.07.2023 - 21.08.2023թթ.-ին, հասանելի է <https://www.e-draft.am/projects/5986>:

⁴¹ «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172131>:

հետախուզական գործունեություն իրականացնող մարմին, իսկ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Բ) ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» 2018 թվականի ապրիլի 12-ի N 439 որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետի համաձայն՝ միասնական էլեկտրոնային հարթակը վարվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, որը, սույն կարգի 3-րդ կետի համաձայն, նշանակում է հարթակի ադմինիստրատորին:⁴² Սույն կարգի 5-րդ մասը սահմանում է ադմինիստրատորի գործառույթները, որոնց վերլուծությունից պարզ է դառնում, որ վերջինս իրականացնում է գուտ վարչական գործունեություն:

«Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» 2018 թվականի հունիսի 11-ի ՀՀ վարչապետի թիվ N 704-Լ որոշմամբ՝ նախարարության գործառույթները ներառում են հակակոռուպցիոն ռազմավարության մշակման ապահովումը, հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարումից բխող միջոցառումների իրականացումը և համակարգումը, հակակոռուպցիոն ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը ⁴³ , որը փաստացի ներառում է նաև ազդարարման ոլորտը:

Նախարարությունը նաև, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպանության հետ համատեղ, իրականացրել է ազդարարման համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ Հայաստանի ողջ տարածքում՝ ուղղված կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականություն սերմանելու և կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման մակարդակը բարձրացնելու նպատակով:⁴⁴

⁴² «Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի տեխնիկական նկարագիրը և վարման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության No 439 որոշում, ընդունված՝ 2018 թվականի ապրիլի 12-ին, Հավելված 2, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=130444>:

⁴³ «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի թիվ No 704-Լ, ընդունված՝ 2018 թվականի հունիսի 11-ին, Հավելված 1, հասանելի է՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=123008>:

⁴⁴ ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական Ֆեյսբուքյան հաշիվ, հասանելի է՝ <https://www.facebook.com/mojarmenia/posts/>:

Բացի այդ, ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծում որպես ազդարարման համակարգի խնդիր է սահմանվել նաև ազդարարման հարցերով պատասխանատուների վերապատրաստման, մասնագիտական աճի հարցերով վերապատրաստում իրականացնող պատասխանատու կառույցների բացակայությունը: Այդ համատեքստում, գործողությունների ծրագրի նախագծի «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության ներքո առաջարկվում է ապահովել ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական գործունեության համակարգումը և նրանց վերապատրաստման կազմակերպումը՝ ճանաչելով ՀՀ արդարադատության նախարարությանը որպես լիազոր մարմին:

Գ) ՀՀ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 13-րդ մասի և 24-րդ հոդվածի 35-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ազդարարման ոլորտում ևս ունի գործառույթներ և լիազորություններ, մասնավորապես՝ վերջինս ապահովում է իր իրավասության ոլորտին առնչվող յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում ձեռնարկում է միջոցներ, իրականացնում է վիճակագրության վարումը և «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ լիազորություններ:⁴⁵ Նույն օրենքի 41-րդ հոդվածը սահմանում է, որ հանձնաժողովն իրականացնում է ազդարարման վարույթ, որի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով: Ինչպես արդեն վերը նշվել էր, ՀՀ գլխավոր դատախազությունը միասնական էլեկտրոնային հարթակով մուտքագրված այն հաղորդումները, որոնք վերաբերվում են շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումներին, վերահասցեագրում է ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Բացի այդ, օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 12-19-րդ կետերի համաձայն ՀՀ կոռուպցիայի կանխարգելման գործառույթների շարքին են պատկանում կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող ռազմավարությունների և միջոցառումների ծրագրերի (այդ թվում՝ ոլորտային) նախագծերի փորձագիտական վերլուծության իրականացումը և դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը իրավասու մարմին, կոռուպցիայի կանխարգելման ծրագրերի մշակումը և դրանց

⁴⁵ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» ՀՀ օրենք, ընդունված՝ 2017 թվականի հունիսի 9-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172271>:

ներկայացումը Կառավարություն, իրավասու մարմինն կարծիքի ներկայացումը կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ, իրավասու մարմին՝ իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը, կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկման բարձրացման ծրագրերի և միջոցառումների անցկացումը, կրթական ծրագրերի իրականացման համար ուսումնամեթոդական ուղեցույցների և այլ նյութերի տրամադրումը, կրթական, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և հանրային ծառայողների վերապատրաստումների ծրագրերում հակակոռուպցիոն դասընթացներ ներառելու և կազմակերպելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, իր մշակած հակակոռուպցիոն ծրագրերի և դրանց իրականացման միջոցառումների ծրագրի (այդ թվում՝ ոլորտային) կատարման վերաբերյալ մոնիտորինգի զեկույցների մշակումը, դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը իրավասու մարմիններ, որոնք փաստացի կարող են ներառել նաև ազդարարման ոլորտի կանխարգելումը և իրազեկումը:

Դ) ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Ազդարարների պաշտպանության հարցում ներպետական մակարդակում վերջերս կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում լիազորություններով է օժտվել նաև Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ նաև՝ ՄԻՊ), որի լիազորությունները սահմանված են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 30.2.-րդ հոդվածի 1-ին մասով, այն է՝ *«Պաշտպանն ազդարարների պաշտպանության ոլորտում իրականացնում է մոնիտորինգ և տվյալների հավաքում, ինչպես նաև հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, կազմակերպությունների կողմից ազդարարների իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է ազդարարների իրավունքների և ազատությունների վերականգնմանը»*⁴⁶ Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Պաշտպանն ազդարարների պաշտպանության իրականացման նպատակով իրավասու է՝*

- 1) *հետևելու պաշտպանական և վերականգնողական միջոցառումների իրականացմանը,*
- 2) *իրականացնելու ազդարարների պաշտպանության մեխանիզմների արդյունավետության մոնիտորինգ և գնահատում,*

⁴⁶ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենք, ընդունված՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172136>:

3) հանդես գալու ազդարարների պաշտպանության իրականացման վերաբերյալ հրապարակային զեկույցներով,

4) իրականացնելու սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Պաշտպանն իրավասու է ազդարարի կամ նրա փոխկապակցված անձի խնդրանքով խորհրդապահական կարգով տրամադրելու խորհրդատվություն և ներկայացնելու անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները», իսկ 4-րդ մասի համաձայն՝ «4. Խորհրդատվության շրջանակում ձեռք բերված տեղեկությունները և անձնական տվյալները ենթակա չեն հրապարակման առանց անձի գրավոր համաձայնության»:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է. «Պաշտպանն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփում և հրապարակում է ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրական տվյալների հիման վրա», 6-րդ մասի համաձայն՝ «Հաշվետվությունը և վիճակագրությունն ամփոփվում և հրապարակվում են ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակի կայքէջում (www.azdararir.am) և Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքէջում (www.ombuds.am)», իսկ 7-րդ հոդվածի համաձայն՝ «Հաշվետվությունը և վիճակագրությունը պետք է առնվազն տեղեկատվություն պարունակեն ազդարարների կողմից իրավասու մարմիններ ներկայացվող հաղորդումների (ըստ տեսակների և ձևերի) և ազդարարներին տրամադրվող պաշտպանության վերաբերյալ»:

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը սահմանում է բողոքի ուսումնասիրության կամ քննարկման ընթացքում ՄԻՊ իրավասությունները, այն է վերջինս՝ «լիազորված է դիմելու իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պաշտոնատար անձին կամ կազմակերպություն՝ առաջարկելով ձեռնարկել ազդարարի խախտված իրավունքների պաշտպանության և վերականգնման ուղղությամբ միջոցառումներ»:

ՀՀ կառավարության «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին» 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման համաձայն՝ իրավասու մարմինը պարտավոր է ՄԻՊ հարցումն ստանալու հիման վրա տրամադրել ազդարարների իրավունքների պաշտպանության ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների, գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված տեղեկատվությունը, ինչպես նաև աջակցել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ ՄԻՊ-ի կողմից ազդարարների իրավունքների

և ազատությունների պահպանմանը հետևելու և դրանց վերականգնմանը նպաստելու գործառնություններին:⁴⁷

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 5-րդ մասի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ Պաշտպանը բողոքի կամ սեփական նախաձեռնությամբ սկսված քննարկման արդյունքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնատար անձի կամ կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքում ընդունում է մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում, և օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, կարող է պետական կամ տեղական ինքնակառավարման իրավասու մարմնին առաջարկել պատասխանատվության ենթարկել պաշտոնատար այն անձին, որի որոշմամբ կամ գործողությամբ (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները և ազատությունները, իսկ պատասխանատվության ենթարկելու առաջարկով դիմել իրավասու վարչական մարմիններին՝ կազմակերպության կողմից մարդու իրավունքների կամ ազատությունների խախտում հայտնաբերելու դեպքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1. մասը սահմանում է. «Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու գրավոր խնդրանքով վարույթն իրականացնող մարմին կարող է դիմել Մարդու իրավունքների պաշտպանը՝ իր նախաձեռնությամբ կամ այդ անձի դիմումի հիման վրա»:⁴⁸

Բացի այդ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 39-րդ հոդվածով սահմանված է, որ Պաշտպանի աշխատակազմի ստորաբաժանման ղեկավարն իր իրավասության սահմաններում համագործակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ, որի շրջանակներում տեսականորեն ՄԻՊ-ն այլ երկրների օմբուդսմենների հետ համագործակցության շրջանակներում կարող է համագործակցել նաև ազդարարման ոլորտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ երկրներում վերջիններս հանդիսանում են ազդարարման ոլորտի կենտրոնական պատասխանատու մարմիններ:

⁴⁷ «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 272-Ն որոշում, ընդունված՝ 2018 թվականի մարտի 15-ին, Հավելված 2, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180232>:

⁴⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, ընդունված՝ 2021 թվականի հունիսի 30-ին, հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180734>:

Ե) ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ

Ազդարարման հարցերով պատասխանատու անձ է հանդիսանում «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված մարմնի կամ կազմակերպության ղեկավարի կողմից համապատասխան իրավական ակտով նշանակված աշխատողը, որը «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ կառավարության վերոնշյալ՝ N 272-Ն որոշման համաձայն՝ իրականացնում է ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և ձևակերպումը:

Բացի այդ, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի 9.1 հոդվածը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները վարում են ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրություն իրենց և իրենց ենթակա մարմիններում ստացված հաղորդումների վերաբերյալ, որը փաստացի իրենց իրավասությունների սահմանում իրականացվում է ազդարարման հարցերով պատասխանատու անձանց կողմից:

ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա) ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Թեև աշխատանքային իրավունքների խախտումները գործող օրենսդրությամբ չեն հանդիսանում ազդարարման առարկա, պրակտիկայում, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից գործարկվում է «EmployeeProtect» աշխատողների իրավունքների պաշտպանության հարթակը⁴⁹, որով փաստացի իրականացվում է աշխատողների իրավունքների խախտումների վերաբերյալ ազդարարում, որը հիմք է հանդիսանում մարմնի կողմից վարչական վարույթ հարուցելու համար: Մինևույն ժամանակ, աշխատանքային իրավունքների խախտումները ևս կարող են ներառել կոռուպցիոն ռիսկեր, որի արդյունքում ներկայացված տեղեկատվությունը կհանդիսանա ազդարարման առարկա: Սակայն, գործող օրենսդրական կարգավորումների շրջանակներում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրավասու չէ ընթացք տալ «EmployeeProtect» աշխատողների իրավունքների պաշտպանության հարթակով ստացված անանուն ազդարարումներին, ինչը խաթարում է ազդարարման սկզբունքի էությունը և հնարավորություն չի տալիս պատշաճ կերպով իրականացնել աշխատողների իրավունքների պաշտպանություն: Սույն խնդրի մասին բարձրաձայնել է ՀՀ առողջապահական և աշխատանքի

⁴⁹ <https://employeeprotect.am/am>:

տեսչական մարմինը՝ Ազդարարման բազմաշահառու աշխատանքային հարթակի՝ 31.08.2023թ.-ին տեղի ունեցած 1-ին առցանց նիստի ընթացքում:

Բ) «ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ/ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱ

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարությունը համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործարկվում են ազդարարման հետևյալ հարթակները.

- «Հայտնիր» նորաստեղծ առցանց ազդարարման հարթակը,⁵⁰ որը միտված է՝ գրանցել, ընդունել և ներկայացնել ըստ իրավասու պետական մարմինների կոռուպցիոն բնույթի դեպքի կամ հանրային ծառայողի շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման կամ այլ իրավախախտումների մասին ազդարարի կողմից ներկայացրած հայտերը և ապահովել դրանց ընթացքը: Միննույն ժամանակ, թեև հարթակով ստացված տեղեկությունը համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ազդարարման առարկային նշյալ հարթակը չունի որևէ օրենսդրական կարգավիճակ:
- «Բիզպաշտպան» գործարար ոլորտի առցանց ազդարարման հարթակը,⁵¹ որը հնարավորություն է տալիս գործարար ոլորտի ներկայացուցիչներին հայտնել ոլորտում հանդիպած կոռուպցիոն դեպքերի և այլ հարակից խնդիրների մասին: Թեև գործարար ոլորտում տեղի ունեցած խախտումները գործող օրենսդրությամբ, որպես այդպիսին, չեն հանդիսանում ազդարարման առարկա, հարթակի մանդատն առավելապես կոռուպցիոն դեպքերի մասին ազդարարումների ստացումն է, որի արդյունքում ներկայացված տեղեկատվությունը փաստացի հանդիսանում է ազդարարման առարկա: Միննույն ժամանակ, նշյալ հարթակը չունի որևէ օրենսդրական կարգավիճակ:

⁵⁰ <https://haytnir.am/am>:

⁵¹ <https://bizprotect.am/>:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներպետական փորձի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ-ում առկա են մի շարք մարմիններ, որոնց վերապահված են ազդարարման ոլորտում գործառույթներ և լիազորություններ: Այդ մարմինների թվին են պատկանում ՀՀ գլխավոր դատախազությունը, ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, ՀՀ ՄԻՊ-ը, ՀՀ արդարադատության նախարարությունը և այլն: Մինչև ժամանակ, նշյալ կառույցներից ոչ մեկը չի հանդիսանում բացառապես ազդարարների պաշտպանության հարցով զբաղվող կենտրոնական մարմին, որն ունի ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու ստորաբաժանում կամ մասնագիտացված աշխատակազմ:

Միջազգային փորձի վերլուծության արդյունքում ազդարարման ոլորտում իրավասու կենտրոնական մարմինների հիմնական գործառույթները կարելի է պայմանականորեն խմբավորել ըստ հետևյալի՝ արտաքին ազդարարումների ստացում և քննություն, ազդարարների պաշտպանություն, խորհրդատվություն և աջակցություն, կենտրոնական վերահսկողություն, վիճակագրության վարում, կանխարգելում (ներառյալ՝ ոլորտային քաղաքականության վերանայում) ու իրազեկում և միջազգային համագործակցություն: Այս համատեքստում միջազգային ձևաչափերի կողմից հատկապես կարևորվում է կենտրոնական պատասխանատու մարմինների կողմից ազդարարների արդյունավետ պաշտպանության և կենտրոնական վերահսկողության համար անհրաժեշտ գործիքակազմի առկայությունը:

Եթե պրոյեկտենք նշյալ դերերի իրականացումը՝ ըստ ՀՀ ազդարարման հարցերով պատասխանատու մարմինների, ապա կունենանք հետևյալ պատկերը՝

Արտաքին ազդարարումների ստացում և քննություն: Թեև ՀՀ օրենսդրությամբ արտաքին ազդարարում է դիտարկվում օրենքով սահմանված բոլոր իրավասու մարմիններին հաղորդում ներկայացնելը, սակայն իրապես արտաքին ազդարարում է հանդիսանում ՀՀ արտաքին նախարարության կողմից վարվող Ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակով ազդարարումը, որով ներկայացված ազդարարումներն ուսումնասիրվում են ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որոնք կարող են դառնալ քրեական վարույթի առարկա: Եթե ազդարարումները վերաբերվում են շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումներին, ապա դատախազությունը դրանք վերահասցեագրում է ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, որի հիման վրա հանձնաժողովը սկսում է ազդարարման վարույթ:

Արդյունքում, պրակտիկայում արտաքին ազդարարման ստացման և քննության գործառույթ են իրականացնում ՀՀ գլխավոր դատախազությունը՝ կոռուպցիոն հանցագործությունների մասով և ՀՀ

կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասով:

Բացի այդ, պրակտիկայում, աշխատողների իրավունքների խախտումների վերաբերյալ ոլորտային արտաքին ազդարարումների ստացման և քննության գործառույթ է իրականացնում նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը՝ «EmployeeProtect» հարթակի միջոցով, իսկ գործարար ոլորտում հանդիպած կոռուպցիոն դեպքերի և այլ հարակից խնդիրների մասին ոլորտային արտաքին ազդարարումների ստացման և ուսումնասիրության գործառույթ է իրականացնում Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարությունը համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն՝ «Բիզպաշտպան» հարթակի միջոցով: Մինևույն ժամանակ, աշխատանքային իրավունքների խախտումները և գործարար ոլորտում տեղի ունեցած խախտումները գործող օրենսդրությամբ չեն հանդիսանում ազդարարման առարկա, սակայն սույն հարթակներով ստացված տեղեկատվությունը կարող է ներառել նաև նշյալ ոլորտներում կոռուպցիոն դեպքերի մասին տեղեկատվություն, որը փաստացի հանդիսանում է ազդարարման առարկա: Բացի այդ, նշյալ հարթակները չունեն օրենսդրական կարգավիճակ:

Ազդարարների պաշտպանություն: Սույն գործառույթի իրականացումը օրենքով վերապահված է ՄԻՊ-ին: Մինևույն ժամանակ, ՄԻՊ-ին տրամադրած ազդարարների պաշտպանությունն ապահովելու գործիքակազմը չի բավարարում միջազգային, մասնավորապես՝ ՏՀԶԿ՝ «Ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու մարմին» ստանդարտներին, մասնավորապես՝ գործող իրավական և կազմակերպական կառուցակարգերի համաձայն՝

- ՄԻՊ գրասենյակում առկա չէ ստորաբաժանում կամ մասնագիտացված աշխատակազմ, որն իրականացնում է բացառապես ազդարարների պաշտպանությանն ուղղված գործառույթ(ներ) և չի կատարում այլ պարտականություններ (թիվ 3.1 հենանիշ),
- օրենսդրությամբ հստակ և միանշանակորեն ամրագրված չէ վերջինիս կողմից՝ ազդարարների դեմ վնասակար գործողությունների դեպքերի վերաբերյալ բողոքների ստացման և քննության, ինչպես նաև արտաքին և ներքին ազդարարման եղանակներով ներկայացված ազդարարումներին պատշաճ ընթացք չտալու դեպքերի և ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների խախտումների նկատմամբ վերջինիս վերահսկիչ գործառույթը (թիվ 3.2. հենանիշ),
- և որ ամենակարևորն է, վերջինս իրավասու չէ կիրառել պատասխանատվության միջոցներ կամ ազդարարների՝ վնասակար գործողություններից պաշտպանության այլ միջոցներ կամ նախաձեռնել դրանց կիրառումը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնատար անձի կամ կազմակերպության կողմից խախտում հայտնաբերելու

դեպքում, քանի որ իրավախախտին պատասխանատվության ենթարկելու հարցում ՄԻՊ գործիքակազմը սահմանափակվում է առաջարկի ներկայացմամբ, որը չի համապատասխանում ՏՀԶԿ նվազագույն ստանդարտին, այն է՝ պատասխանատվության ենթարկելու պահանջի ներկայացմանը: Նմանապես, «ՄԻՊ-ի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված Պաշտպանի՝ իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, պաշտոնատար անձին կամ կազմակերպությանը դիմելու՝ ազդարարի խախտված իրավունքների պաշտպանության և վերականգնման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու առաջարկով դիմելու իրավասությունը ևս չի կարող որակվել որպես «պատասխանատվության միջոցների կամ ազդարարների՝ հաշվեհարդարից (վնասակար գործողություններից) պաշտպանության այլ միջոցների կիրառում կամ նախաձեռնում» (թիվ 3.3. հենանիշ):

Բացի այդ, միջազգային փորձի վերլուծությունից ևս պարզ է դառնում, որ օմբուդսմենին նման գործառույթների վերապահումն արդյունավետ չէ վերահսկիչ և պատասխանատվություն կիրառելուն ուղղված բավարար գործիքակազմի բացակայության պատճառով:

Խորհրդատվություն և աջակցություն: Ազդարարի կամ նրա փոխկապակցված անձի խնդրանքով խորհրդապահական կարգով խորհրդատվություն տրամադրելու և անձին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու պարտականությունը օրենքով վերապահված է ՄԻՊ-ին: Հաշվի առնելով, որ ՀՀ-ում մասնավոր ոլորտը ներքին ազդարարման խողովակներ սահմանելու պարտավորություն չունի, այդ հարցով մասնավոր ոլորտին ևս խորհրդատվություն տրամադրելու գործառույթ՝ որևէ մարմնի համար նախատեսված չէ: Բացի այդ, օրենքով նախատեսված չէ ազդարարին հոգեւոցիալական աջակցության տրամադրում, հետևաբար՝ առկա չէ նաև լիազոր մարմին:

Կենտրոնական վերահսկողություն: Չնայած 07.12.2022 թվականին կատարված՝ ՄԻՊ-ին ազդարարների պաշտպանության իրականացմանը հետևելու և ազդարարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությունների վերապահմանն ուղղված օրենսդրական փոփոխություններին, գործող օրենսդրությամբ որևէ մարմնի վերապահված չէ «Ազդարարների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կիրարկման մոնիտորինգ իրականացնելու վերահսկիչ լիազորություն/գործառույթ: Նշյալը մասնավորապես ներառում է վարչաիրավական արդյունավետ գործիքակազմ՝ վերահսկողություն իրականացնել իրավասու մարմինների կողմից ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգերի ստեղծման, օրենքի դրույթներին դրանց համապատասխանության ապահովման, դրանց արդյունավետության ապահովման, դրանցով ստացված ազդարարումներին պատշաճ ընթացք տալու դեպքերի, ինչպես նաև ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների խախտումների նկատմամբ, ինչպես նաև

կիրառել պատասխանատվության կամ այլ միջոցներ՝ իրավասու մարմնի կողմից խախտում հայտնաբերելու դեպքում, ինչը ևս ՏՀԿԶ վերոնշյալ թիվ 3 հենանիշի բաղադրիչ է կազմում:

Հարկ է նշել, որ ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծի «Ապահովել ազդարարման համակարգի գործունեության արդյունավետությունը» թիվ 2.20 գործողության ներքո սույն հարցին անդրադարձ է կատարվում մասնակի՝ ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական գործունեության համակարգման մասով, և առաջարկվում է ճանաչել ՀՀ արդարադատության նախարարությանը որպես լիազոր մարմին, ով կապահովի ազդարարման հարցերով պատասխանատուների մասնագիտական գործունեության համակարգումը և նրանց վերապատրաստման կազմակերպումը:

Վիճակագրության վարում: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ի դեմս, որպես կանոն, ազդարարման պատասխանատուների վարում են ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրություն իրենց և իրենց ենթակա մարմիններում ստացված հաղորդումների վերաբերյալ, որի տարեկան ամփոփման և հրապարակման պարտականությունը օրենքով վերապահված է ՄԻՊ-ին:

Բացի այդ, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից գործարկվող «EmployeeProtect» հարթակում և ևս ներառված է աշխատանքային իրավունքների խախտման վիճակագրության վարման գործիք:

Կանխարգելում (ներառյալ՝ ոլորտային քաղաքականության վերանայում) ու իրազեկում: Օրենսդրական մակարդակում որևէ մարմնի վրա դրված չէ ազդարարման ոլորտի կանխարգելման և իրազեկման՝ հստակ և միանշանակորեն ամրագրված պարտականություն, որը կներառի ազդարարման ոլորտի ոլորտային քաղաքականության վերանայումը, մասնավոր ոլորտի հետ կապի հաստատումը՝ նրանց բարեվարք կառավարման համատեքստում ազդարարման (ընթացակարգերի ներդրման) անհրաժեշտության մասին տեղեկացնելու նպատակով, (բարեվարք կառավարման համատեքստում) ազդարարման ընթացակարգերի մասին իրազեկման ուղեցույցների մշակումը, մասնավոր ոլորտում ազդարարումը խթանելու նպատակով կազմակերպչական մշակույթը և բարեվարք կառավարման ջանքերը գնահատելու/չափելու գործիքների մշակումը, բարեվարք կառավարման համատեքստում ազդարարման վերաբերյալ հետազոտությունների իրականացումը և այլն:

Ազդարարման ոլորտի քաղաքականության վերանայումն իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ որպես վերջինիս՝ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաղադրատարր: Բացի այդ, նախարարությանն է վերապահված հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարման ապահովումը և համակարգումը, որը փաստացի կարող է անուղղակիորեն ներառել ազդարարման ոլորտի իրազեկման պարտավորություն:

Պրակտիկայում, նախարարության կողմից իրականացվել է ազդարարման համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման արշավ:

ՀՀ կոռուպցիայի կանխարգելման գործառնությունների շարքին են պատկանում կոռուպցիայի կանխարգելման և հակակոռուպցիոն կրթությանն/իրազեկմանն ուղղված մի շարք գործառնություններ, այդ թվում՝ ոլորտային մակարդակում, որոնք փաստացի կարող են ներառել նաև ազդարարման ոլորտի կանխարգելումը և իրազեկումը:

Միջազգային համագործակցություն: Օրենսդրությամբ հակակոռուպցիոն ոլորտի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության գործառնությունը վերապահված է ՀՀ արդարադատության նախարարությանը, որը փաստացի կարող է ներառել ազդարարման ոլորտի կազմակերպությունների հետ համագործակցությունը: Բացի այդ, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության պարտավորություն օրենքով դրված է նաև ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վրա:

Օրենքով համագործակցության պարտավորություն դրված է նաև ՄԻՊ-ի վրա, թեև չի նշվում «միջազգային» բառը: Տեսականորեն ՄԻՊ-ն այլ երկրների օմբուդսմենների հետ համագործակցության շրջանակներում կարող է համագործակցել նաև ազդարարման ոլորտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ երկրներում վերջիններս հանդիսանում են ազդարարման ոլորտի կենտրոնական պատասխանատու մարմիններ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելնելով ազդարարման ոլորտում իրավասու մարմիններին վերաբերող, մի կողմից, միջազգային ստանդարտների, մասնավորապես՝ ՏՀԶԿ, և առաջավոր փորձի, մասնավորապես՝ ԵՄ և ԱԼԳ երկրների, մյուս կողմից, ներպետական օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրությունից՝ առաջարկվում է ՀՀ-ում ներդնել ազդարարման ոլորտում իրավասու մարմինների հետևյալ մոդելը.

1. Ազդարարման ոլորտում պատասխանատու իրավասու կենտրոնական մարմնի ձևավորում, որը կհամապատասխանի ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի 5-րդ փուլի առնչությամբ սահմանված «Ազդարարների պաշտպանությունն ապահովելու համար պատասխանատու մարմնի» թեստին: Որպես կենտրոնական մարմին առաջարկվում է դիտարկել հետևյալ երկու տարբերակներից մեկը՝

ա) Նոր մարմնի ձևավորում, որը կստեղծվի հատուկ այդ նպատակով և կիրականացնի բացառապես ազդարարներին առնչվող գործառույթներ, ինչպիսի մոդել գործում է, օրինակ, Նիդեռլանդներում (Ազդարարման հարցերով իրավասու մարմին), Սլովակիայում (Ազդարարների պաշտպանության գրասենյակ), Իռլանդիայում (Պաշտպանված ազդարարման հանձնակատարի գրասենյակ), Լյուքսեմբուրգում (Հաղորդումների գրասենյակ), Իսպանիայում (Ինֆորմատորների պաշտպանության ազգային գործակալություն): Այս տարբերակի առավելությունը կայանում է նրանում, որ կապահովվի ազդարարման հարցերով զբաղվող՝ բարձր տեսանելիությամբ և մասնագիտացվածությամբ գործակալության առկայությունը: Միևույն ժամանակ, նման մարմնի ստեղծումը կարող է պահանջել զգալի ռեսուրսներ և լինել ժամանակատար:

բ) Ազդարարման ոլորտում կենտրոնական լիազորությունների վերապահում ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին և այդ նպատակով համապատասխան ստորաբաժանման հիմնում հանձնաժողովի կառուցվածքում, ինչպիսի մոդել գործում է, օրինակ, Ուկրաինայում (Կոռուպցիայի կանխարգելման ազգային գործակալություն), Ավստրիայում (Կոռուպցիայի դեմ պայքարի և կոռուպցիայի կանխարգելման դաշնային գրասենյակ), Հունաստանում (Ազգային թափանցիկության մարմին), Իտալիա (Ազգային հակակոռուպցիոն մարմին), Պորտուգալիայում (Ազգային հակակոռուպցիոն մեխանիզմ), Ռումինիայում (Ազգային բարեվարքության գործակալություն): Այս տարբերակը կարող է ավելի արդյունավետ և պակաս ծախսատար և ժամանակատար՝ հաշվի առնելով մարմնի՝ կոռուպցիայի կանխարգելմանն ուղղված մանդատը, ձևավորված կարողությունները և փորձը, ինչպես նաև պետության քաղաքականությունը՝ ուղղված վերջինիս մասնավոր ոլորտում կոռուպցիայի կանխարգելման գործիքակազմի տրամադրմանը:

Անկախ այն հանգամանքից, թե նշյալ մոդելներից որի որդեգրման ուղղին կընտրվի, անկյունաքարային է, որ կենտրոնական մարմինն իրականացնի հետևյալ գործառույթները՝

- Կենտրոնական վերահսկողություն իրավասու մարմինների կողմից ներքին և արտաքին ազդարարման ընթացակարգերի ստեղծման, օրենքի դրույթներին դրանց համապատասխանության ապահովման, դրանց արդյունավետության ապահովման, դրանցով ստացված ազդարարումներին պատշաճ ընթացք տալու դեպքերի, ինչպես նաև ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների խախտումների նկատմամբ, որի իրականացման նպատակով մարմինը կունենա վարչաիրավական արդյունավետ գործիքակազմ՝ կիրառել պատասխանատվության կամ այլ միջոցներ իրավասու մարմնի կողմից խախտում հայտնաբերելու դեպքում:

Առաջարկվում է կենտրոնական վերահսկողության ներքո ներառել նաև վերահսկողություն մասնավոր ոլորտում ներքին ազդարարման համակարգերի ներդրման, դրանց արդյունավետության ապահովման, դրանցով ստացված ազդարարումներին պատշաճ ընթացք տալու դեպքերի, ինչպես նաև ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների խախտումների նկատմամբ: Այս համատեքստում առաջարկվում է քննարկել նաև միասնական ազդարարման հարթակի՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարման և այն կենտրոնական մարմին տրամադրելու հարցը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջինս է իրականացնելու կենտրոնական վերահսկողություն ազդարարման համակարգերի արդյունավետ կիրառման նկատմամբ:

- **Ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ վնասակար գործողություններից կանխարգելիչ և հետագա իրավական և այլ պաշտպանության ապահովում՝ վերահսկիչ և պատասխանատվության միջոցներ կիրառելու արդյունավետ գործիքակազմով**, որը կներառի ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ վնասակար գործողությունների դեպքերի վերաբերյալ բողոքների ստացում և քննություն, իր նախաձեռնությամբ կամ ազդարարի դիմումի հիման վրա՝ ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց կիրառելու գրավոր խնդրանքով դիմում վարույթն իրականացնող մարմին, ազդարարի հանդեպ կիրառված վնասակար գործողությունների գործերով վարույթի հարուցում, այդպիսիք հաստատվելու դեպքում՝ վարչական ակտի ընդունում՝ դրանց կասեցման/վերացման պահանջով, իր նախաձեռնությամբ կամ ազդարարի դիմումի հիման վրա՝ մասնակցություն ազդարարարի մասնակցությամբ դատական վարույթին՝ անկախ խորհրդականի կարգավիճակով:

Նշյալ երկու խումբ լիազորությունների վերապահումը ազդարարման հարցերով կենտրոնական լիազոր մարմնին կապահովի նաև ՀՀ համապատասխանությունը ՏՀԶԿ վերոնշյալ՝ թիվ 3 հենանիշին:

Բացի այդ, առաջարկվում է կենտրոնական մարմինն վերապահել նաև հետևյալ լիազորությունները/գործառույթները՝

- **Վիճակագրության վարում, որը կներառի իրավասու մարմինների ազդարարման պատասխանատուների կողմից ստացված հաղորդումների ամփոփում և հրապարակում,** որն առավել մանրամասն ներկայացված է «Ազդարարման դեպքերի վերաբերյալ վիճակագրության համակարգի կատարելագործում» վերլուծության մեջ:
- **Ազդարարման ոլորտում միջազգային համագործակցության համակարգում,**
- **Ազդարարման ոլորտում կանխարգելում և իրազեկում,** որը կներառի ազդարարման վերաբերյալ հետազոտությունների իրականացումը, ոլորտային քաղաքականության և իրավական կարգավորումների խնդիրների վերհանումը և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների/ծրագրերի ներկայացումը ՀՀ արդարադատության նախարարությանը՝ որպես հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականությունը մշակող մարմին, ազդարարների պաշտպանությանն առնչվող և ազդարարման ընթացակարգերի մասին մասնագիտական կարծիքների և մեթոդական ուղեցույցների մշակումը, այդ թվում՝ բարեվարք կառավարման համատեքստում, ներքին ազդարարման պատասխանատու անձանց գործնական ուսուցման և վերապատրաստման ապահովումը, մասնավոր ոլորտում ազդարարումը խթանելու նպատակով կազմակերպչական մշակույթը և բարեվարք կառավարման ջանքերը գնահատելու/չափելու գործիքների մշակումը և մասնավոր ոլորտի հետ կապի հաստատումը՝ նրանց բարեվարք կառավարման համատեքստում ազդարարման (ընթացակարգերի ներդրման) անհրաժեշտության մասին տեղեկացնելու նպատակով:
- **Խորհրդատվության և աջակցության տրամադրում,** որը կներառի խորհրդատվական կարգով ընդհանուր բնույթի խորհրդատվության տրամադրում ֆիզիկական անձին, ով ներկայացրել է կամ մտադիր է ներկայացնել ազդարարում, իր և փոխկապակցված անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունների մասին, ուղղորդում դեպի վարչական/քրեական մարմիններ կամ ծառայություններ, որոնք պատասխանատու են քրեական հանցագործությունների հետաքննության կամ որևէ այլ օրենսդրական դրույթների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման համար, կամ որևէ այլ իրավասու մարմնի, որտեղ կարող են ազդարարել ենթադրյալ ոլորտային իրավախախտման մասին, ուղղորդում դեպի գործակալություններ կամ կազմակերպություններ, որոնք կարող են տրամադրել իրավաբանական կամ հոգեւոցիալական աջակցություն և ընդհանուր տեղեկատվության տրամադրում ենթադրյալ իրավախախտման կապակցությամբ: Բացի այդ, առաջարկվում է

նախատեսել նաև մարմնի կողմից խորհրդատվության տրամադրում և աջակցություն մասնավոր հատվածի գործատուներին՝ իրենց կազմակերպություններում ազդարարման ներքին մեխանիզմների նախագծման/ներդրման և ազդարարման բարդ գործերի քննության հարցում: Առաջարկվում է նաև պահպանել ՄԻՊ գործող մանդատը՝ ազդարարներին մասնագիտացված իրավաբանական օգնության տրամադրման հարցում, ինչպես նաև ներդնել հոգեւոցիալական աջակցության տրամադրում՝ նախատեսելով լիազոր մարմին, որն առավել մանրամասն ներկայացված է «Ազդարարների իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործում և խրախուսման մեխանիզմների ներդրում» վերլուծության մեջ:

- **Իր իրավասության սահմաններում արտաքին ազդարարումների ստացում և քննություն՝** ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը որպես կենտրոնական մոդելի դիտարկման պարագայում, որն առավել մանրամասն ներկայացված է հաջորդ կետերում:

2. Արտաքին ազդարարման հայեցակարգի վերանայում և արտաքին ազդարարման համար պատասխանատու մարմինների հստակ ցանկի սահմանում: Թեև ՀՀ օրենսդրությամբ արտաքին ազդարարում է դիտարկվում օրենքով սահմանված բոլոր իրավասու մարմիններին հաղորդում ներկայացնելը, սակայն իրապես արտաքին ազդարարում է հանդիսանում ՀՀ արտաքին նախարարության կողմից վարվող ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակով հաղորդումների ստացումը: Նշյալն ավելի մանրամասն ներկայացված է «Ազդարարման եղանակների կատարելագործում» փորձագիտական վերլուծությամբ: Այս համատեքստում առաջարկվում է որպես արտաքին ազդարարման համար պատասխանատու մարմիններ սահմանել՝

- **ՀՀ գլխավոր դատախազություն՝** որպես կոռուպցիոն դեպքերին առնչվող ազդարարումների պատասխանատու մարմին,
- **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝** որպես շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումներին առնչվող ազդարարումների պատասխանատու մարմին,
- **Ոլորտային խախտումների համար պատասխանատու մարմիններ,** օրինակ՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը՝ աշխատանքային իրավունքների խախտմանն առնչվող ազդարարումների մասով: Ոլորտային

խախտումների համար պատասխանատու մարմինների սպառիչ ցանկը ներկայացված է «Ազդարարման եղանակների կատարելագործում» վերլուծությամբ, որը բխում է «Ազդարարման հասկացության, պաշտպանության ենթակասությունների և տեղեկատվության, պաշտպանության պայմանների կատարելագործում» փորձագիտական վերլուծությամբ ներկայացված՝ ազդարարման առարկայի ընդլայնմանն ուղղված առաջարկություններից:

Առաջարկվում է նաև սահմանել, որ **կոռուպցիոն դեպքերի և բարեվարքությանն առնչվող վերոնշյալ խախտումների մասով արտաքին ազդարարման խողովակ է հանդիսանում ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը**: Անվտանգության նկատառումից ելնելով՝ առաջարկվում է պահպանել գործող մոդելը, երբ ազդարարումները ուսումնասիրվում են ՀՀ գլխավոր դատախազության կողմից, և ըստ ենթակայության վերահասցեագրվում ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Այս փուլում **ուլորտային խախտումների համար պատասխանատու մարմինների կողմից առաջարկվում է ստեղծել սեփական ազդարարման համակարգեր/հարթակներ**, ինչպիսին, օրինակ, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից գործարկվող «EmployeeProtect» հարթակն է, **որոնց ևս անհրաժեշտ է տրամադրել օրենսդրական կարգավիճակ, որն իր մեջ կներառի նաև դրանցով ստացված անանուն ազդարարումներին ընթացք տալու լիազորություն**:

Բացի այդ, առաջարկվում է օրենսդրական որոշակի կարգավիճակի տրամադրում նաև կազմակերպությունների կողմից գործարկվող արտաքին ազդարարման հարթակներին, որոնք ապահովում են գաղտնիության, անկախության և անանունության համապատասխան երաշխիքներ, ինչպիսին, օրինակ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարությունը համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործարկվող «Հայտնիր» հարթակն է:

3. Ներքին ազդարարման համակարգի կատարելագործում: Քանի որ գործող օրենսդրությամբ սահմանված է միայն ներքին ազդարարման հաղորդումների հաշվառման և ձևակերպման համար պատասխանատու անձանց նշանակելու և վերջիններիս մասին աշխատողներին տեղեկացնելու պահանջ, ինչը միջազգային ստանդարտների համաձայն, նույնը չէ, ինչ ազդարարման ընթացակարգերի (channels), օրինակ՝ հատուկ ներքին ազդարարումներ ներկայացնելու նպատակով ստեղծված հեռախոսագծի, էլեկտրոնային փոստի կամ վեբ ձևի (web-form)՝ ստեղծումը, **առաջարկվում է ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակը դիտարկել նաև որպես հանրային ոլորտում ներքին ազդարարման միասնական հարթակ՝ ապահովելով օրենքով նախատեսված իրավասու մարմինների պատասխանատու անձանց մասնակի հասանելիությունը հարթակին՝ ստեղծելով անձնական գրասենյակներ՝ բացառապես իրենց մարմիններին առնչվող**

ներքին ազդարարումներ ստանալու նպատակով: Նշյալն առավել մանրամասն ներկայացված է «Ազդարարման եղանակների կատարելագործում» փորձագիտական վերլուծությամբ:

4. Մասնավոր հատվածում ազդարարման համակարգի կատարելագործում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, մի կողմից, վերջերս կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ազդարարման համակարգի օրենսդրությունը տարածվում է նաև մասնավոր հատվածի աշխատողների վրա, իսկ, մյուս կողմից, առկա չէ պետության կողմից գործարկված մասնավոր հատվածում խախտումների վերաբերյալ ազդարարումների համակարգ, որի մասին բարձրաձայնված է նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծում, **առաջարկվում է նախատեսել կենտրոնական մարմնի գործիքակազմ՝ ուղղված՝**

- կենտրոնական վերահսկողության իրականացմանը մասնավոր ոլորտում ներքին ազդարարման համակարգերի ներդրման, դրանց արդյունավետության ապահովման, դրանցով ստացված ազդարարումներին պատշաճ ընթացք տալու դեպքերի, ինչպես նաև ազդարարների պաշտպանության օրենսդրության այլ պահանջների խախտումների նկատմամբ,
- մասնավոր ոլորտի ներկայացուցիչներին խորհրդատվությանը և աջակցության տրամադրմանը՝ իրենց կազմակերպություններում ազդարարման ներքին մեխանիզմների նախագծման/ներդրման և ազդարարման բարդ գործերի քննության հարցում,
- բարեվարք կառավարման համատեքստում կոռուպցիայի և դրա մասին բարձրաձայնող ազդարարների նկատմամբ վնասակար գործողությունների կանխարգելմանը և ազդարարման համակարգերի ներդրման կարևորության մասին գործարար հատվածի իրազեկմանը՝ մասնավոր ոլորտին բարեվարք կառավարման համատեքստում ազդարարման (ընթացակարգերի ներդրման) անհրաժեշտության մասին հանդիպումների անցկացման, մասնավոր ոլորտում ազդարարումը խթանելու նպատակով կազմակերպչական մշակույթը և բարեվարք կառավարման ջանքերը գնահատելու/չափելու գործիքների, իրազեկման նյութերի մշակման և այլ եղանակներով:

Այս համատեքստում հարկ է նշել, որ որպես կենտրոնական մարմին ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դիտարկման գործոն է հանդիսացել նաև այն, որ նաև ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի նախագծով, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից ներկայացված առաջարկի հիման վրա, նախատեսված է ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին մասնավոր ոլորտում կոռուպցիայի

կանխարգելմանը միտված գործիքակազմի տրամադրմանն ուղղված գործողություն, որից բխում է նաև սույն առաջարկությունը:

Բացի այդ, մասնավոր ոլորտում առաջարկվում է նաև ազդարարման ներքին ընթացակարգերի (channels) պարտադիր սահմանման օրենսդրական պահանջի նախատեսում 249 և ավելի աշխատող ունեցող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև պետական գնումներին մասնակցող ընկերությունների համար: Այս համատեքստում առաջարկվում է օրենսդրական կարգավիճակի տրամադրում Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարությունը համակարգող «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործարկվող «Բիզպաշտպան» հարթակին, որը կհանդիսանա մասնավոր հատվածի նշյալ կազմակերպությունների աշխատողների կողմից ներքին ազդարարումների ներկայացման արտապատվիրված (outsourced) խողովակ (channel)՝ հաշվի առնելով վերջինիս կողմից գործարար ոլորտում հանդիպած կոռուպցիոն դեպքերի և այլ հարակից խնդիրների մասին ոլորտային ազդարարումների ստացման և ուսումնասիրության տարիների փորձը և անվտանգության, անկախության և գաղտնիության երաշխիքների ապահովումը, ինչպես նաև համանման երաշխիքներ ապահովող այլ երրորդ կողմերի՝ առկայության դեպքում: Առաջարկվում է համապատասխան համագործակցության նորմատիվ հիմքերի սահմանումը՝ «Բիզպաշտպան» հարթակի և կենտրոնական մարմնի միջև:

Այս ամենն առավել մանրամասն ներկայացված է «Մասնավոր ոլորտում ազդարարման համակարգի կատարելագործում» վերլուծության մեջ: